Հայաստանում հանգրվանած շատ արցախցիներ հեռացել են Հայաստանից: Միայն Տավուշում հաստատված 1 110 արցախցի է (253 ընտանիք) հեռացել: Ահա, այսպես է իշխանությունը «տնավորում» իր մեղքով հայրենիք, հարազատներ, տուն, ապրուստ, հարազատների գերեզմաններ կորցրած ու Հայաստանում բնակություն հաստատած արցախցիներին:

Կարդացեք՝ էջ 4

Գործ ունենք մի խմբակի հետ, որ երկար տարիներ երազել է գալ իշխանության, ստացել է եւ պատրաստ է այդ նույն իշխանությունը պահելու համար զոհել, բառի բուն իմաստով՝ ամեն ինչ: Չենք զարմանա, որ մի օր սա հեռուստացույցով լայվ մտնի՝ մարդ ուտի, եւ մարդիկ արդարացնեն: Այդ տեսակ բարոյականության մեջ ենք մենք ապրում:

Կարդացեք՝ էջ 6

Թալանչի նախկինների մասին բալլադներին այսօր ավելացել են կալուգացի օլիգարխի «արկածները», որոնք ամեն օր հեքիաթի պես պատմում են ՔՊ-ական պաշտոնյաները՝ մտածելով, թե նորից կարող են հեղափոխություն անել, չհասկանալով, որ իրենց կողմնակիցներն արդեն բավականին փոքրաթիվ են՝ հեղափոխական ալիք առաջացնելու համար:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 64 (4199), 18 ապրիլ, շաբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատան փակվելուց շուրջ 2 տարի անց աշխատակազմը չի ստացել աշխատավարձը. շուրջ կես տարվա աշխատավարձ են պարտք: Մեզ ահազանգել էր ծննդատան նախկին աշխատակից՝ անեսթեզիոլոգ Հայկանդուխտ Գրիգորյանը՝ որ չնայած քաղաքապետարանը խոստացել է վճարել, բայց հետո հրաժարվել է, թե ծննդատան նախկին կառավարիչն է պատասխանատու: Մեր հրապարակումից հետո քաղաքապետարանից կոլեկտիվին խոստացել են, որ միջոցներ կձեռնարկեն: Ծննդատունը 2020-ից հանձնված է եղել հավատարմագրային կառավարչին: 2022-ից կառավարիչն իր պարտավորությունները չի կատարել, եւ քաղաքապետարանը սկսել է պայմանագրի խզման գործընթաց: Ապա ընթացել է դատական պրոցես, որն ավարտվել է 2024 թ. ապրիլի 29-ին: Ծննդատան կառավարումը 2024 թ. մայիսի 1-ից անցել է քաղաքապետարանին, հուլիսի 14-ին առողջապահության նախարարի հրամանով կասեցվել է գործունեությունը: 2 տարի է՝ կոլեկտիվը չի ստացել կես տարվա աշխատավարձերը, դիմել են դատարան, որը պարտավորեցրել է վաճառել գույքը եւ վճարել գումարները, սակայն ԴԱՀԿ-ն քայլեր չի ձեռնարկել այդ ուղղությամբ: Քաղաքապետարանից ասել են, թե ԴԱՀԿ-ն պարտատերերի ցանկն է պահանջել եւ խոստացել, որ կվճարեն աշխատավարձերը: «Երեկ մեզ քաղաքապետարանից ասացին, որ ցուցակը դեռ չեն ստացել, խոսքը մոտ 180 մլն դրամ պարտքի մասին է: Թվում է, թե ԴԱՀԿ-ն է պատասխանատու, բայց, մյուս կողմից, քաղաքապետարանի կառավարման տակ է եղել ԲԿ-ն: Անհասկանալի թնջուկի մեջ ենք հայտնվել»,- ասաց Հայկանդուխտ Գրիգորյանը՝ հավելելով, որ քաղաքապետարանը միլիարդների պարգեւավճարներ է բաժանում, բայց ընդամենը 180 մլն դրամ աշխատավարձը հրաժարվում է վճարել:

Մեր տեղեկություններով, իշխանությունն ընդդիմադիրների շարքերում բազմաթիվ ականներ է ներդրել, որոնք պետք է մասնակցեն նախընտրական անցուդարձին՝ ոչ միայն ներսից ինֆորմացիոն արտահոսքեր ապահովելու, այլեւ քրեական գործընթացներում քաղաքական մրցակիցների դեմ գործելու, ցուցմունքներ տալու նպատակով: Իշխանական մեր աղբյուրներից պարզեցինք, որ իշխանությունը ներդրված գործակալներ ունի թե Գագիկ Ծառուկյանի, թե Ռոբերտ Քոչարյանի եւ հատկապես Սամվել Կարապետյանի թիմերում: Պատահական չէ, որ նախօրեին Արտաշատի կառույցից ձերբակալված մեկ տասնյակից ավելի անձանց մոտ կեսը ցուցմունքներ է տվել իբր կաշառք վերցնելու վերաբերյալ:

8 տարի շարունակ

Սա առաջին դեպքը չէ, երբ Նիկոլ Փաշինյանը վիրավորում է ՀՀ քաղաքացիներին, քաղաքական ուժերին կամ մասնագիտական խմբերին: Նա դատավորներին վնգստացողներ էր ասում, դիվանագետներին՝ օտարի կոշիկ լիզողներ, ընդդիմությանն ասում է բոմժեր, լրագրողներին ֆայլաբազարում կանգնողների հետ է համեմատում, հոգեւորականներին՝ մանկապիղծ, իսկ կաթողիկոսին պիղծ է անվանում: Հիմա էլ ընդդիմադիր ուժերին ընտրողներին է «շուն ու շանգյալ» անվանում: Մինչդեռ նախկինում ինքն ու իր թիմը մեղադրում էին ընդդիմադիրներին՝ ծաղրում, դատապարտում, թե իշխանական զանգվածին «զոմբի ու ժեխ» են անվանում: Այս վայրի, անհարգալից խոսույթը, իրականում, հենց իրենք են ներմուծել մեր կյանք: Եվ դա սկսվել է 2018 թվականին, երբ փորձում էին հասնել Սերժ Սարգսյանի հրաժարականին եւ ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում՝ հալածում ու վիրավորում էին հանրապետականներին, նրանց տան շեմերին դագաղներ էին դնում ու անունները սեւ ժապավենների մեջ առնում: Իսկ ինքը՝ Փաշինյանը, ԱԺ ամբիոնից սպառնում էր բաց տեքստով, ստիպում, որ իրեն՝ 7 տոկոսանոց խմբակցության ներկայացուցչին ձայն տան, քանի որ ժողովրդին ինքն է հանել փողոց եւ ինքն է հասել նախագահ Սարգսյանի հրաժարականին: Թվում էր, թե իշխանություն ստանալով՝ Փաշինյանը կխաղաղվի, կփոխի իր լեքսիկոնը, կհասկանա, որ չի կարելի հանրությանը պառակտել, եւ կհորդորի իր էլեկտորատին՝ վերադառնալ բարեկրթության, փոխադարձ հարգանքի դաշտ, բայց նա 8 տարի շարունակ օգտվում է այդ գործիքակազմից՝ սպառնալով ասֆալտին փռել, պատերին ծեփել, «ընդդիմությանը շինել», կագեբեի պադվալները գցել: Հիմա նույնը շարունակում է, որովհետեւ կարծում է, որ այդ խոսույթն իրեն 8 տարի հաջողություն է բերել, եւ դրանով է կարողացել իր մրցակիցներին զսպել: Վերջը բարին անի:

Պաշտպանության նախարարության մեր աղբյուրներից տեղեկացանք, որ առաջիկա ամիսներին 25-օրյա վարժական հավաքներն ավելի ինտենսիվ են կազմակերպվելու: Նախընտրական այս փուլում ծանուցագրեր են ստանալու քաղաքականապես ակտիվ բազմաթիվ երիտասարդներ: Ըստ որոշ լուրերի, զինկոմիսարիատներին մարզպետների, թաղապետերի կողմից ցուցակներ են փոխանցվել՝ հատկապես ընդդիմադիր ուժերին հարող երիտասարդների անուններով, որպեսզի նրանց ծանուցագրեր ուղարկվեն, եւ վարժական հավաքների հրավիրվեն: Իմաստը հասկանալի է, որ հնարավորինս շատ ակտիվ մարդիկ կտրվեն նախընտրական գործընթացներից ու պայքարից:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՂԵՐԸ ՉԻ ՏԱԼԻՍ

Ապրիլի 14-ին կայացավ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասի հանդիպումը: Մեր տեղեկություններով, Բրյուսել մեկնելուց առաջ Նիկոլ Փաշինյանն ԱԳ նախարարին հանձնարարել էր հստակեցնել այն գումարների փոխանցման ժամկետները, որոնք ԵՄ-ն խոստացել է տրամադրել Հայաստանին՝ խորհրդարանական ընտրություններից առաջ «ապատեղեկատվության եւ արտաքին ազդեցության դեմ պայքարի», այսինքն՝ իրենց իշխանության վերարտադրման համար: Մեր աղբյուրն ասում է, որ Միրզոյանի հարցին ի պատասխան, Կայա Կալլասը հայտարարել է, որ ֆինանսական օգնությունը Հայաստանին հետաձգվում է՝ Եվրամիության բյուջեում առաջացած դեֆիցիտի պատճառով: Եվ ընդգծել է, որ ԵՄ պարտավորությունների կատարման առաջնահերթությունը տվել են Ուկրաինային, այս պահին Հայաստանին չեն կարող աջակցել, սակայն «Բրյուսելը բոլոր ջանքերը կգործադրի՝ խնդիրը լուծելու համար»: Կալլասից պատասխան ստանալով՝ Նիկոլ Փաշինյանը վրդովվել է եւ ասել. «Նրանք իսկապե՞ս չեն հասկանում, որ մեզ մոտ իրավիճակն օր-օրի վատանում է: Հիմա այդ փողերը մեզ ավելի շատ են պետք, քան՝ Ուկրաինային: Այդ 50 միլիոնն Ուկրաինային չի օգնի՝ շտկել իրավիճակը, իսկ մեզ շատ է անհրաժեշտ»:

ԵԿԵՂԵՑԻ

ՈՒՐ ԵՆՔ ՀԱՍԵԼ, ՈՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ ՇՈՒՐԹԵՐ ԼՑՆԵԼՈՒՑ ԲԱՑԻ ՆԱԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ Է ԳՈՐԾԱԳՐՈՒՄ



Տրեկ Սամվել դպիր Գրիգորյանը բաց նամակով դիմել էր Գարեգին Բ-ին, գրելով. «Վեհափառ Տեր, աղերսում եմ պաշտոնից հեռացնել եւ կարգալույծ անել Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեսուչ Անուշավան եպիսկոպոսին՝ հաշվի առնելով հետեւյալ հանգամանքները»: Եվ շարադրել էր 12 պատճառ, թե ինչու է հարկավոր տիրադավ եպիսկոպոսին կարգալույծ անել, որտեղ նշել էր պատարագի ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսի անունը չնշելը, «քրիստոնյա մարդուն անվայել վարքագիծը», սարկավագներից մեկին ծեծի ենթարկելը եւ այլն: «Հրապարակը» զրուցել է **Տեր Վրթանես քահանա Բաղալյանի** հետ:

- Տեր Հայր, քանի որ որոշ թեմերի առաջնորդներ անցել էին Փաշինյանի կողմը եւ Վեհափառի հեռացումն էին պահանջում, հետաքրքիր է՝ ինչպե՞ս են այդ թեմերում ծառայություն իրականացնող հոգեւորականներն այժմ կարողանում աշխատել Մայր Աթոռի եւ թեմի առաջնորդի հետ, իրենց ծառայությունն իրականացնել: Չէ՞ որ թեմերը պետք է փոխհարաբերություններ ունենան Էջմիածնի հետ, ինչպե՞ս են կարգավորվում աշխատանքային հարաբերությունները:

- Ծանր է տիրադավների ենթակայության տակ գտնվող քահանաների վիճակը, շատ ծանր է: Նախկինում էլ է ծանր եղել նրանց հետ աշխատելը, քանի որ նրանք (թեմերի առաջնորդները՝ Հ. Գ.) երբեք չեն փայլել իրենց վարքով, հոգեւոր ծառայություններով, նրանց վարքը միշտ է եղել բացասական: Հո պատահական չէ՞, որ Նիկոլ Փաշինյանը նրանց վրա է կոմպրոմատներ հավաքել: Տեղեկություններ կան, որ անգամ Անուշավան Ժամկոչյանին ասել է՝ քեզ խելոք պահիր, թե չէ էդ լցրած պռոշներովդ բանտ կուղարկեմ քեզ.... Դրա համար էլ նա Փաշինյանին ծառայություններ է մատուցում հիմա: Ասեմ Ձեզ, որ վերջերս նա անգամ իրեն թույլ է տվել մի հրաշալի սարկավագի ծեծի ենթարկել: Տեսնում եք, թե ուր ենք հասել, որ հոգեւորականը, շուրթեր լցնելուց բացի, նաեւ բռնություն է գործադրում: Ուղղակի խայտառակություն է: Համացանցում մեկը մի լավ գրառում էր արել, ասել էր. «Շուրթերդ լցնելու փոխարեն ուղեղ լցնեիր, որ սարկավագի վրա ձեռք չբարձրացնեիր»: Ցավ եմ ապրում, որ եպիսկոպոսի կոչում ունեցող մարդը կարող է այդ աստիճան ցուցամոլ լինել, որ հոգեւոր գիտելիքներն ավելացնելու փոխարեն դեմքը կոսմետիկ փոփոխությունների ենթարկելու մասին մտածի բացառապես, շուրթեր լցնի, բոտոքս անի եւ այդքանից հետո Գեղամ սարկավագի նման բարեշնորհ տեսակի վրա ձեռք բարձրացնի անամոթաբար:

- Իսկ սարկավագը չի՞ դիմել իրավապահներին:

- Եթե նա չունենար իրավապահների անմիջական աջակցությունը, իրեն նման բան իրավունք չէր վերապահի: Նա խուլիգանի նման է իրեն պահել, եւ դա ուղղորդված է եղել հենց իրավապահների կողմից: Գուցե առաջիկայում հենց սարկավագին ձերբակալեն, ինչպես Միքայել եւ Դավիթ Մինասյաններին արեցին, եւ պնդեն, որ նա է Ժամկոչյանին հունից հանել: Անուշավան Ժամկոչյանն անձեռնմխելի է, նա այժմ Փաշինյանի աջակցությունն ունի: Բնական է, որ կպատժվի նա, ով չի աջակցում իշխանություններին: Անուշավանը մի դեպքում է ենթարկվելու պատասխանատվության, երբ Նիկոլը չվերարտադրվի անօրեն ձեւերով:

- Ի դեպ՝ փաստորեն, Մայր Աթոռը, մասնավորապես՝ կաթողիկոսը, այնքան լիբերալ եւ ժամանակակից հայացքներ ունի, որ իր ձեռամբ եպիսկոպոս դարձած հոգեւորականը կարող է նման կոսմետիկ միջամտությունների դիմել:

- Վեհափառն ինչեր է քաշել դրանց ձեռքին: Նա աննախադեպ երեւույթ է մեր եկեղեցում, նրա նման երկրորդը չի եղել: Ցավալի է դա շատ, ես անլուրջ եմ վերաբերվում նրան, բայց դե՝ ի՞նչ արած, ժամանակները փոխվում են, ամեն դեպքում, մարդ ծեծելն ավելի վատ բան է, քան շուրթ լցնելը: Անկախ նրանից, թե նա ինչը կլցնի, ես իմ աջակցությունն եմ հայտնում ծեծի ենթարկված սարկավագին, եթե անգամ Անուշավանի փոխարեն այլ մեկը լիներ, այդ պարագայում եւս ես դատապարտելու էի արարքը, թեպետ վստահ եմ, որ նա իշխանությունների կողմից պարգեւատրման է արժանանալու այդ քայլի համար:

- Իսկ ինչպե՞ս են տիրադավները հաղորդակցվում Մայր Աթոռի հետ:

- Մայր Աթոռը նրանց վերաբերվում է հանդուրժողաբար, բայց իրենք իրենց լկտիաբար են դրսեւորում: Նրանց պահվածքը կոռեկտ չէ:

Նյութերը՝
ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Ռոման Սլոյանը, որ մեծ հարգանք ունի համայնքում, Փաշինյանի այցի օրը չգնաց

Ապրիլի 15-ին Նիկոլ Փաշինյանը ոչ միայն շնորհավորել էր եզդիական համայնքին նոր տարվա՝ Մալաքե Թաուսի տոնի առիթով, այլեւ այցելել էր Ալագյազ համայնք, ներկա գտնվել միջոցառմանը: «Հրապարակ»-ը հետաքրքրվեց եզդի համայնքի ներկայացուցիչ **Ռուստամ Հախոյանից**՝ արդյո՞ք այդ այցը, իրենց տոնը շնորհավորելը դերակատարում են ունենալու, եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող եզդիական համայնքն առաջիկա ընտրություններում ընտրելո՞ւ է Նիկոլ Փաշինյանին: Նա նշեց, որ այն մարդկանց, ովքեր փոշմանել են, որ նախորդ անգամ Փաշինյանին են ընտրել, չեն կարողանա համոզել. «Կուզեն, թող ամբողջ օրը գան՝ քարոզարշավ անեն, ասեն՝ էսպես կանենք, էնպես կանենք, մարդիկ ոնց տրամադրված են, էդպես էլ անելու են, ոչ մեկի վրա նման այցերով չեն կարողանա ազդել: Ընտրողը կընտրի, չընտրողը չի ընտրի: Քարոզարշավը ցուցադրական բան է, որ ժողովրդին իրար դեմ է հանում: Մեր գյուղում ժողովուրդը 4-5 մասի է բաժանված: Նայում ես՝ արդեն առաջվա սերն ու միությունը չկա: Փաշինյանին դիմավորելու գնացել էի, որովհետեւ հետաքրքիր էր ուղղակի, մինչեւ վերջ չեմ էլ մնացել, վաղը որ Սամվել Կարապետյանը գա, իր կողքն եմ կանգնելու, մյուս օրը որ այլ թեկնածու գա, իր կողքն եմ կանգնելու, էդ չի նշանակում, որ աջակցում եմ բոլորին, էդ նշանակում է, որ լսում եմ թեկնածուներին»: Նրա խոսքով, Փաշինյանի այցը համայնք այլ ենթատեքստ ուներ: «Մի եզդի կին մոտեցավ, լավ ասեց՝ որ ինչի էս 8 տարվա մեջ մի օր համայնք չեկավ ու հենց ընտրություններից առաջ է գալիս: Ինքն էլ ասեց, թե հրավիրող չկար, իսկ էս անգամ Ռուստամ Բաբոյանն է հրավիրել՝ իր հորդորով»: Անդրադառնալով հարցին, թե ինչ շանսեր ունի Փաշինյանը եզդիական համայնքում, Հախոյանը նշեց, որ եզդի ազգն իր ընտրությունը, իհարկե, քվեարկության օրը կհայտնի, բայց այն արտաքին քաղաքականությունը, որ վարում են իշխանությունները, մեղմ ասած, իրենց սրտով չէ: «Մեր մեծ բարերար Միրզա Սլոյանը, որ վերջերս մահացավ, իր որդին՝ Ռոման Սլոյանը, մեծ հարգանք ունի համայնքում, ինքը Փաշինյանի այցի օրը չգնաց ու չկանգնեց հավաքվածների շարքում: Սրանից շատ բան կարելի է ենթադրել»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՆՐԱՆՔ ՎԵՐՋԱՑԱԾ ՄԱՐԴԻԿ ԵՆ՝ ՎԵՐՋԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

«Հրապարակի» զրուցակիցը «Նժար» կուսակցության վարչապետի թեկնածու, իրավապաշտպան **Նինա Կարապետյանցն** է:

- «Քաղհասարակության» կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը, նախօրեին փորձել է ծառայություն մատուցել գործող իշխանություններին եւ արտահայտվել է ընտրակաշառքի թեմայով՝ անդրադառնալով իշխանությունների կողմից «Ուժեղ Հայաստանի» նկատմամբ հարուցված կեղծ քրեական վարույթներին, որոնցով անգամ ՔՊ-ին ենթակա դատարանները չեն կարողանում կալանքի սանկցիաներ տալ: Նա մասնավորապես գրել է, որ ընդդիմությունը կանանց առաջ է մղում, թաքնվում նրանց հետեւում: Ոչ ավել, ոչ պակաս՝ հայկական ընդդիմությանը համեմատել է ջիհադիստների ու իսլամական ծայրահեղականների հետ, որոնք կանանց ու երեխաներին օգտագործում էին որպես «մեկանգամյա օգտագործման նյութ»: Մի կողմից, այս անձը մոռացել է, որ 18-ի հեղափոխության ժամանակ անգամ դպրոցների կրտսեր դասարանների աշակերտներն էին մասնակցում, մյուս կողմից՝ կարծում է, որ կանայք չպետք է ներգրավված լինեն ընտրություններին, հատկապես՝ ընդդիմության կողմից: Այսինքն, կանայք չպետք է զբաղվեն քաղաքականությամբ: Երկար տարիներ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների համար իբրեւ թե պայքարող այս մարդու համար կինը բացառապես լվացք անելու եւ բորշչ պատրաստելու իրավունք ունի: Ի՞նչ կարծիք ունեք նրա այդ հայտարարության մասին:

- Ես դադարել եմ հետեւել նրանց գրառումներին, որովհետեւ հասկացել եմ, որ առողջությունս այլեւս չի ներում: Չեմ ասի՝ բոլորը, բայց մեծ թվով մարդիկ, ովքեր առաջներում օբյեկտիվ էին, շատ վաղուց դադարել են լինել այդպիսին: Ակնհայտորեն ընդգծված փաղաքշական վերաբերմունք ունեն օրվա իշխանությունների նկատմամբ եւ պատրաստ են արդարացնել ամեն բան, ինչ անում է օրվա իշխանությունը: Պետք է պարզապես դադարել հետեւել այդ մարդկանց, պետք է այլ մոտեցում որդեգրել: Այժմ ձեւավորվում է թիմ, որն առանց լրացուցիչ շահառուների կարող է կոչվել քաղհասարակություն: Նրանք հիմնականում երիտասարդներ են, ովքեր առանց ֆինանսավորումների ունեն մեծ աուդիտորիա եւ վստահություն՝ հանրության շրջանում: Ուրախ եմ, որ տեղի է ունենում սերնդափոխություն, քանի որ մեզ պետք չէ այնպիսի քաղհասարակություն, որն իր հռչակած ստանդարտներին դեմ է գործում:

- Բայց ինչպե՞ս կարելի է կանանց ստորադասել տղամարդկանցից, մի՞թե Սաքունցը դրա համար է գրանտներ ստանում Արեւմուտքից:

- Մարդիկ, ովքեր սկզբունքորեն չեն ուզում տեսնել, որ մեր երկրում կան քաղաքական ուժեր՝ կին թե տղամարդ, ովքեր թրաֆիկինգի զոհեր են, էլ ի՞նչ ասես: Թվում էր, թե նրանք նախկինում ադեկվատ վարքագիծ ունեն եւ սրտիկ ուղարկողներ չեն, այժմ իշխանությունների վարքագծում ոչ մի սխալ չեն տեսնում, փոխարենը տեսնում են հակառակ թեւում գտնվող մարդկանց թերացումները: Այս մարդկանց ուղղակի պետք է իգնոր անել եւ դադարել հետեւել նրանց: Նրանք կան այնքան ժամանակ, քանի դեռ մենք նրանց կարեւորություն ու նշանակություն ենք տալիս, հենց հասկացան, որ իրենք ոչ մեկին պետք չեն, չունեն հետեւորդներ, ուղղակի կլռեն: Նրանք վերջացած մարդիկ են, վերջացել են, վերջին շնչում են եւ իրենց վերջին ծառայություններն են մատուցում Նիկոլ Փաշինյանին:

ԴՊՐՈՑ

ԵԹԵ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂ ՊԵՏՔ Է ՉԱՇԽԱՏԵՆ

ՔՊ-ականները՝ վարչապետից մինչեւ մանկապարտեզի դաստիարակ, ամբողջ երկրով մեկ անթաքույց նախընտրական քարոզչությամբ են զբաղված, իսկ այլ կուսակցությունների անդամներին նույնիսկ թույլ չեն տալիս իրենց կուսակցության նախընտրական շտաբ մտնել՝ ազատում են աշխատանքից, դա համարելով քարոզչական գործունեությամբ զբաղվել: Արդեն հայտնել ենք, որ Ծառուկյանի շտաբ գնալու համար Արարատ գյուղի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի աշխարհագրության եւ ռազմագիտության ուսուցիչ Արտակ Մնացականյանին հորդորել են ազատման դիմում գրել այն բանից հետո, երբ նրան նկարել են «Առաջարկ Հայաստանին» ուժի նախընտրական շտաբ մտնելիս:

Թե ինչ զարգացումներ են եղել դրանից հետո, տեղեկացանք Արարատի բնակիչներից, որոնցից շատերը համակրում են ուսուցչին: Մնացականյանի ընկերները պատմում են, որ նա դպրոցում քարոզչություն չի արել, է եղել «Առաջարկ Հայաստանին» ուժի ժողովին, հաջորդ՝ ուրբաթ օրը, գնացել է ԲՀԿ գրասենյակ, ՔՊ-ի «շպիոնները» բռնացրել են զինվորականին, նկարել, սարքել մատի փաթաթան, մարդուն ստիպել են, որ կամ զեկուցագիր գրի, կամ դուրս գա դպրոցից: Նա էլ նախընտրել է ազատման դիմում գրելը: Մի դիմում ուրբաթ օրն է գրել, մյուսը՝ երկուշաբթի:

Ասում են՝ «Զինղեկ» օպերացիային մասնակցել են եւ մարզպետը, եւ դպրոցի տնօրենը:

Վերջին՝ կոշտ խոսակցությունը եղել է տնօրեն Մակիչ Փանոսյանի կաբինետում: Նա Արտակ Մնացականյանին ասել է. «Դուրս արի սենյակիցս, վերջ, դու հեռացված ես»:

Հետաքրքիր է, որ դպրոցի տնօրեն Մակիչ Փանոսյանը ՀՀԿ անդամ է, բայց ասում են՝ արդեն «լողացող» անդամ է, ՔՊ-ականների հետ կիրակի օրերին եկեղեցի է գնում եւ այլն: **Մակիչ Փանոսյանը** «Հրապարակի» հետ զրույցում հրաժարվեց խոսել միջադեպի մասին: Միայն ասաց. «Դպրոցում աշխատանքային ժամերին քա-

- Ես տեղյակ չեմ, սկի չեմ էլ ճանաչում՝ ում մասին է խոսքը: Բայց բացառում եմ, որ անտեղի բան արած լինեն:

- Նա ասում է, որ դպրոցում քարոզչություն չի արել, ընդամենը իր կուսակցության շտաբ է այցելել:

- Եթե համաձայն չեն կառավարության հետ, կարծում եմ, պետական մի որեւիցե տեղ պետք է չաշխատեն ու չզբաղեցնեն որեւիցե պաշտոն: Զանգեք տնօրենին, հարցրեք:

- Ձեր դպրոցներում այլ կուսակցություններին անդամակցելու համար ազատո՞ւմ են աշխատանքից:

- Ես տենց բաներով չեմ զբաղվում, գոյություն ունի կրթության վարչություն, դպրոցի տնօրեն, իրենք են զբաղվում նման հարցերով:

- Մարզպետին չի՞ ենթարկվում աշխատակազմը, կրթության վարչությունը: Դուք չե՞ք ղեկավարում այդ վարչությունը:

- Ցավդ տանեմ, ի՞նչ է հետաքրքիր: Որեւիցե մեկը դպրոցում որեւիցե շարժ, մի հատ հանգամանք, որ մենք նկատեցինք՝ քաղաքական բաներ է անում, մի

կանյանի անունը, սարսափահար անջատեց հեռախոսը, ասելով. «Կարծիք չունեմ, հաջողություն»:

Արարատի բնակիչները մարզպետին այնքան էլ չեն մեղադրում: «Մարզպետը շատ լավ տղա է, բայց ՔՊ-ական է»,- ասում են նրանք: Համայնքապետի մասին էլ ասում են՝ նա ի՞նչ կարա անի: «Էսօր էդ համայնքապետեր, վարչական ղեկավարներն էնքան իմպոտենտ կառույցներ են: Իրանք Նիկոլի քարտեզը հագիվ դոշներին խփած ման են գալիս: Էն, որ մեր բակի Հրանտը, որ ախրաննիկի ռացիան է կպցնում, ման գալիս, ասում են՝ էս ի՞նչ թիթեռ ա նստել ձեր դոշին, հիմա սրանք են: Չնայած, ավելի լավ էր՝ թիթեռ խփեին դոշներին, քան մեր հայրենիքը պղծեին»,- այսպիսի արարատցիներ էլ կան, որոնք իրենց անունով չեն խոսում:

Արտակ Մնացականյանը «Հրապարակի» հետ զրույցում ասաց, որ ի պաշտոնե մինչեւ 16:00-ն պետք է լինի դպրոցում, ինքը միշտ ժամը 4-ից հետո է գնացել շտաբ: «Մի անգամ եմ ընդամենը մինչեւ չորսը գնացել, տնօրենին էլ

հարցը զուտ քաղաքական է: ԲՀԿ-ական ուսուցչի հետեւից վաղուց են ընկած եղել: Դպրոցի կոլեկտիվում այլ ընդդիմադիրներ էլ կան, բայց ՔՊ-ականներին հատկապես զինղեկ Մնացականյանն է «խանգարել», քանի որ նա նոր է ընդդիմադիր դարձել: Նախկինում եղել է զինվորական ու չի զբաղվել քաղաքականությամբ: Մոտ երկու ամիս նրան հետեւել են իսկական շպիոնաժի կանոններով ու վերջապես «կեղտ» են գտել: Անցած հինգշաբթի Արտակ Մնացականյանը հրավիրված

րոզչություն իրականացնելն օրենքով է արգելվում, ես ի՞նչ պետք է ասեմ՝ ճիշտ է կամ սխա՞լ»: Շտաբ գնալը համարվում է քարոզչությո՞ւն: «Դա թող իքն ասի»,- ասաց տնօրենը:

Արարատի մարզպետ **Սեդրակ Թեւոնյանի** հետ հետաքրքիր զրույց ստացվեց՝ խոստովանություններով լի, թեեւ սկզբում պնդում էր, թե բացարձակ տեղյակ չէ ուսուցչի ազատումից:

- Նրան ազատել են ԲՀԿ-ական լինելո՞ւ համար:

րոպե չի մնալու դպրոցում:

- Բայց «քաղաքական բանը» ո՞րն է: Ինչո՞ւ են ասել՝ դիմում գրի, գնա:

- Ձեր կարծիքով, ինչ որ տեղի է ունեցել, տենց պատահական մարդուն ասել են՝ բան արա՞: Խնդրում եմ, տնօրենի հետ: Ինչ որ տեղի է ունենում, ձեզ ոչ մի բան չի հետաքրքրում, էս զապիսները, մի հոգի դուրս է եկել, դա է մենակ հետաքրքրում:

Խոսեցինք նաեւ Արարատի վարչական ղեկավար **Էլեն Գասպարյանի** հետ, որը, լսելով Արտակ Մնացա-

ասել եմ, դա սարքել են բոլըա: Ինձ չեն խնդրել դիմում գրել, բայց ոչ պաշտոնական խողովակով տեղյակ են պահել, որ հեռանամ»: Ասաց, որ շատ ակտիվ է, շատ հայրենասեր, երբեք չի վախեցել երեխաներին ասել՝ Մասիսը մերն է, Արագածի ցավն էլ տանեմ: Ինչով է զբաղվելու՝ դեռ չգիտի: Երազում է, որ հունիսի 8-ից հետո զարթնենք նոր Հայաստանում, բայց քաղաքականությամբ չի զբաղվել դպրոցում, բարձր դասարանցիներին էլ ասել է՝ ինձ քաղաքական հարցեր չտաք:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

2017-ԻՆ ՊԵՏՔ Է ԱՎԱՐՏՎԱԾ ԼԻՆԵՐ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌ 7 ՏԱՐԻ ԷԼ ԿՊԱՀԱՆՋՎԻ

Վաղը՝ ապրիլի 19-ին, մեծ ավտոերթով նշվելու է Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի Աշտարակ-Գյումրի հատվածի բացումը: Օրեր առաջ Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան կոչով հրավիրել էր մարդկանց՝ մասնակցել այդ միջոցառմանը. «Մասնակցության համար կարող եք գրանցվել ստորեւ բերվող QR կոդի միջոցով: Մասնակցության համար, բնականաբար, պետք է ներկայանալ ավտոմեքենայով, բայց, իհարկե, մեքենայի մեջ կարող են լինել ուղեւորներ: Ավելին՝ անհրաժեշտ է առնվազն մեկ ուղեւոր՝ ուղղորդողի կարգավիճակով, որովհետեւ երթը կարգավորվելու է իմ ֆեյսբուքյան այս էջի ուղիղ եթերում, եւ վարորդի կողքի նստատեղին պետք է նստած լինի ուղղորդողը, որպեսզի հետեւի եթերին եւ տեղեկատվություն փոխանցի վարորդին: Երթի մասնակից համարվելու են միայն գրանցված ավտոմեքենաները: Ծառայողական ավտոմեքենաների մասնակցությունը երթին արգելվում է, բացի պետական պահպանության ներքո գտնվող անձանց սպասարկող մեքենաներից: Մեկնարկի տեղի եւ ժամի մասին գրանցված վարորդներին կտեղեկացնենք հեռախոսազանգով: Իսկ պլանը հետեւյալն է. գնում ենք Գյումրի, այցելում ենք թանգարաններ, եկեղեցիներ, սրճարաններ, ռեստորաններ, զբոսնում ենք Գյումրիում, շփվում ենք»:

Իրականում, այս հայտարարություն-կոչը խիստ ձեւական է, քանի որ մի քանի օր է՝ տեղեկություններ ենք ստանում, որ հրահանգել են բոլոր պետական ծառայողներին՝ սեփական ավտոմեքենաներով մասնակցել ավտոերթին, հրահանգ է իջեցվել մարզպետներին, յուրային գործարարներին, որ իրենց հիմնարկների աշխատողներին, մարզի բնակիչներին հավաքագրեն եւ հուժկու ավտոերթ կազմակերպեն: Վերջում՝ Գյումրու Վարդանանց հրապարակում տեղի է ունենալու համերգ, որտեղ ելույթ է ունենալու նաեւ «Վարչաբենդը»:

Նիկոլ Փաշինյանը, ըստ ամենայնի, որոշել է մեծ շուքով նշել Հյուսիս-Հարավ բազմաչարչար ճանապարհի Աշտարակ-Գյումրի հատվածի բացումը՝ այն ներկայացնելով որպես իր իշխանության դարակազմիկ ձեռքբերում: Այնինչ նա ընդամենը շարունակում է 2009-ից մեկնարկած այս ծրագիրը, որն իրականացվում է վարկային միջոցների հաշվին:

Հյուսիս-Հարավ ծրագրի իրականացման գրասենյակի առաջին ղեկավար **Ֆելիքս Փիրումյանը** մեզ հետ զրույցում հիշեցնում է, որ ի սկզբանե ծրագրի իրականացման հետեւյալ սխեման էր գծվել. այն պետք է կառուցվեր հարավից՝ Սյունիքից, որն ամենաժամանակատար ու ծախսատար հատվածն էր՝ թունելների եւ կամուրջների առկայության պատճառով: Միայն վերջում պետք է հասնեին Աշտարակ-Գյումրի հատվածին, սակայն դեռ նախկին իշխանությունները փոխել են հերթականությունը՝ սկսել են ոչ թե հարավից, այլ հյուսիսից՝ Երեւան-Աշտարակ հատվածից, որի կառուցումն ավելի հեշտ էր, ավելի մատչելի եւ ավելի արագ իրականացվող: «Այն ժամանակ նախատեսվում էր, որ մինչեւ 2017 թվականը ամբողջ ճանապարհը պետք է կառուցված լիներ, բայց երբ մենք չսկսեցինք Սյունիքի հատվածից, ի սկզբանե ակնհայտ էր, որ 2017 թիվը դառնում էր միֆ: Փաստացի, այդպես էլ ստացվեց: Հիմա 2026 թվականն է, բայց մենք դեռ խոսում ենք, թե երբ պետք է սկսվի ամենածանր հատվածը: Հիմա որ Մեղրիից դեպի Քաջարան ճանապարհ են կառուցում, երկու անգամ թեթեւ ճանապարհ է, քան ինչ նախատեսված է այս ծրագրով՝ Քաջարան-Սիսիան հատվածով կառուցվելիք ճանապարհը: Փոխարենն ամենահեշտը Երեւան-Աշտարակ հատվածն էր, որտեղից էլ սկսեցին աշխատանքները»:

Թե ինչու փոխվեց սխեման, Փիրումյանը հետո է հասկացել պատճառները. «Հաշվի առնելով, որ դեռեւս այն ժամանակ գլուխ ջարդելով ուզում էին այս ծրագիրը շուտ սկսել, բայց քանի որ, բացի այդ հատվածից, մյուս բոլոր հատվածներում աշխատանքները սկսելուց առաջ առաջանում էր հողերի օտարման խնդիր, որը պահանջում էր շատ լուրջ ժամանակ, տարիներ՝ գուցե, ուստի նախընտրեցին սկսել Երեւան-Աշտարակ ճանապարհից, որը միակ հատվածն էր, որ հողի օտարման անհրաժեշտություն չէր առաջացնում, իսկ մեր իշխանավորներն ի՞նչ էին ուզում՝ առաջին հերթին շուտ սկսել ծախսել ծրագրի փողը, դրա համար իրենց ձեռք տվեց առաջին հատվածն այդ կետից սկսել»: Այսինքն, հնարավորինս շուտ եւ շատ փող ծախսելու համար սկսեցին. «Հա, դուք մոտավորապես ճիշտ ասացիք»: Ի դեպ, Փիրումյանը, որ ծրագրի հաստատումից մեկ տարի անց՝ 2010-ի մայիսին է նշանակվել գրասենյակի ղեկավար, հասկանալով, որ իր կոնցեպցիան չի ընդունվում, ամիսներ անց հրաժարվել է պաշտոնից:

Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո հայտարարություններ արվեցին, թե շարժվելու են ծրագրի հին տրամաբանությամբ՝ աշխատանքները սկսելու են Սյունիքից, սակայն նախկինների պես նրանք էլ նախընտրեցին փող աշխատելու հեշտ ճանապարհը եւ վաղը Աշտարակ-Գյումրի ճանապարհի բացումն են անելու, ինչպես նախկին վարչապետներն էին ոգեւորված բացում ճանապարհի իրենց կառուցած հատվածները: «Ծրագրում այս հատվածը՝ Աշտարակ-Գյումրին, վերջին փուլն էր լինելու, այս իշխանություններն էլ, փաստորեն, չցանկացան փոխել եւ գնացին հեշտ ճանապարհով»,- նկատեց Փիրումյանը: Թե որքան ժամանակ կպահանջվի Սյունիքի հատվածում Հյուսիս-Հարավի կառուցման համար, մեր զրուցակիցը հստակ ժամկետներ չի կարող մատնանշել. «Ես կարող եմ տրամաբանության սկզբունքով հաշվարկել, որ եթե 2010-ից պետք է մեկնարկեինք ու 2017-ին հասցնեինք, զուգահեռ մյուս հատվածներն էլ սկսեինք եւ կարճ ժամկետներում ավարտեինք, ապա առնվազն 7 տարի կպահանջվի ծրագիրն ավարտելու համար»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻԱՅՆ ՏԱՎՈՒՇԻՑ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՄ 1100 ԱՐՑԱԽՑԻ Է ՀԵՌԱՑԵԼ

ԱՐՑԱԽ

2025թ. օգոստոսի 18-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր տեսաուղերձում Հայաստանում եւ Ադրբեջանում հակամարտության մեկնարկից ի վեր փախստական դարձած անձանց վերադարձի թեմայի արծարծումը համարել է վտանգավոր, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղությանը վնասող գործոն եւ հավելել. «Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցների ապագայի մասին մեր պատկերացումը հետեւյալն է. նրանք մեր եւ միջազգային հանրության աջակցությամբ պետք է տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում եւ այստեղ ապրեն, ստեղծագործեն, հաստատվեն՝ որպես Հայաստանի Հանրապետության լիարժեք քաղաքացիներ»:

Արցախի հայաթափումից անցել է 2 տարի 7 ամիս, եկեք տեսնենք, թե Արցախից բռնագաղթածներն ինչպես են Հայաստանի իշխանության եւ միջազգային աջակցությամբ տնավորվել ՀՀ-ում: Այդ գործընթացը դիտարկենք Տավուշի մարզի օրինակով: Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ 2023թ. աշնանը Արցախից բռնագաղթածներից Տավուշում բնակություն է հաստատել 2 հազար 970 անձ (780 ընտանիք): 2025թ. սկզբին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել այդ ժամանակ Տավուշում բնակվող արցախցիների թվի վերաբերյալ: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում 2025 թվականի հունվարի 8-ի դրությամբ կա ԼՂ-ից բռնի տեղահանված 564 ընտանիք (1920 անձ)»: 2024թ. դեկտեմբերին մարզպետարան հարցում էի կատարել նաեւ Տավուշում արցախցիների աշխատանք ունենալու վերաբերյալ: Այն ժամանակ մարզպետարանից հայտնել էին, որ Տավուշում բնակվող, բռնագաղթած արցախցիներից աշխատանք ունի ընդամենը 36-ը: 2024թ. դեկտեմբերի դրությամբ Արցախից բռնագաղթածներից ոչ մեկը Տավուշում սեփականության իրավունքով բնակարաններ չէր գնել:

2026թ. ապրիլի 6-ին մարզպետ Հ. Ղալումյանին տեղեկատվական նոր հարցում եմ արել. «Ապրիլի 6-ի դրությամբ Տավուշի մարզում Արցախից բռնագաղթած քանի անձ է բնակվում, քանի ընտանիք, նրանցից քանիսն է պետական բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերել մարզում, որ համայնքներում՝ քանի բնակարան»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում բնակվում է Լեռնային Ղարաբաղից տեղահանված 1860 անձ (527 ընտանիք): Պետական բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերած ընտանիքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմնին»: Մարզպետ Ղալումյանը չի հայտնել, թե որն է այդ խնդրով պետական լիազոր մարմինը: Տավուշի մարզպետն ու մարզպետի աշխատակազմն իրենց ոչ արդյունավետ աշխատանքի համար պետբյուջեից միլիոնավոր դրամների պարգեւավճարներ են ստանում, սակայն մարզպետը չգիտի կամ չի ցանկացել հայտնել, թե քանի բռնագաղթած արցախցի ընտանիք է Տավուշում բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերել:

Կամավոր Արցախ մեկնելու, մարտնչելու Նիկոլ Փաշինյանի հայտնի կոչի հաջորդ օրը՝ 2020թ. հոկտեմբերի 22-ին, Արցախ, մարտնչելու համար կամավորագրվելու կոչ արած, այդ նպատակով «Իջեւան» կամավորական ջոկատ հավաքած, սակայն այդպես էլ Արցախ՝ պատերազմին մասնակցելու չմեկնած Հայկ Ղալումյանն այժմ, իր սանիկ Նիկոլ Փաշինյանի նման, վախենում է «Արցախ» բառն օգտագործել, փոխարենը նշում է՝ Լեռնային Ղարաբաղ: Նախկինում Տավուշի մարզպետարանից տեղեկացել էի, որ ընդամենը արցախցի 10 ընտանիք է պետական բնակարանային ապահովման ծրագրով բնակարան ձեռք բերել Տավուշի Նոյեմբերյան եւ Իջեւան համայնքներում:

2025թ. մարտի 25-ին ԱԺ-ում պատասխանալով պատգամավոր Զարուհի Բաթոյանի հարցին՝ Ն.Փաշինյանը հայտարարել է. «Նույն Ղարաբաղի շարժման հետ կապված՝ մենք չպետք է ասենք, որ Հայաստանի եւ Ղարաբաղի էլիտան Ղարաբաղի ժողովրդին Ղարաբաղում պահել է պատանդի կարգավիճակում, այսինքն՝ մարդկանց պահել 30 տարի անորոշությունների մեջ. դուք հասկանո՞ւմ եք՝ դա ինչ է նշանակում՝ չստեղծելով նորմալ կրթական համակարգ: Ինչի իրենք Ղարաբաղին լո՞ւրջ են վերաբերվել, ո՞չ, լուրջ չեն վերաբերվել»:

Հիմա նույն հարցը վերադարձնենք իրեն՝ իսկ Նիկոլ Փաշինյանն ինչպե՞ս է վերաբերվում արցախցիներին. մետրոյում լեզվակռիվ է անում արցախցի զոհված հերոսի աղջկա հետ, արցախցիներին անվանում է փախածներ, մեկ օր հետո կրկնում է իր միտքը՝ դասալիքներ, փախածներ անվանելով բոլոր արցախցիներին: Նա պարբերաբար ատելության խոսք է հնչեցնում արցախցիների հասցեին, ինչն արագ տարածվում եւ ընդօրինակվում է իր թիմի ու իր համակիրների կողմից:

Եվ բնական է, որ Արցախի հայաթափումից, 2023թ. սեպտեմբերից հետո Հայաստանում հանգրվանած շատ արցախցիներ պետք է հեռանային Հայաստանից: Միայն Տավուշում հաստատված 1 110 արցախցի է (253 ընտանիք) հեռացել Հայաստանից: Ահա, այսպես է իշխանությունը «տնավորում» այդ նույն իշխանության մեղքով հայրենիք, հարազատներ, տուն, ապրուստ, հարազատների գերեզմանները կորցրած ու հարկադրաբար Հայաստանում բնակություն հաստատած արցախցիներին, որ նրանք, բնակարան ու աշխատանք չունենալով, հեռանում են երկրից:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՎԻՐԱՀԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼ. Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԲԿ-ՈՒՄ

«Դրապարակ»-ն «Էջմիածին» բժշկական կենտրոնից ահազանգ է ստացել, որ 3 ամիս առաջ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակված Հովհաննես Արմենի Օհանյանը վիրահատարաններում տեսախցիկներ է տեղադրել եւ, իր կաբինետում նստած, հետեւում է կլինիկայի անցուդարձին: Ցանկացած պահի նրա կաբինետ կարող են մտնել բժիշկներ կամ այլ անձինք եւ տեսնել, թե վիրահատարաններում ինչ է կատարվում: Սա, աշխատակիցների կարծիքով, մարդու իրավունքների ոտնահարում է, անձնական կյանքի գաղտնիության խախտում:

Բացի դրանից, մեզ դիմած քաղաքացիները պնդում են, որ տնօրենի ԺՊ-ն անհիմն պատճառներով հին աշխատակիցներին ստիպում է աշխատանքից ազատման դիմումներ գրել եւ նշանակում է յուրայիններին, որոնք չունեն համապատասխան փորձ եւ պատրաստվածություն: Դրանով փորձում է իր դիրքերն ամրապնդել ԲԿ-ում: Նա արդեն հեռացրել է Վաղարշապատի պոլիկլինիկայի փոխտնօրեն Լիլիթ Գասպարյանին, վիրաբույժ Արմեն Վարդանյանին, նյարդաբան Ժաննա Հայրիյանին եւ էլի մի քանիսին՝ տարբեր բաժիններից: Աշխատակիցները նաեւ պատմում են, որ նա այցեր է կատարում բաժանմունքներ եւ հիվանդասենյակներ՝ որպես համայց, առանց բժշկական խալաթի կամ համազգեստի, ինչը հակասում է անվտանգության եւ հիգիենայի կանոններին եւ նաեւ բժշկական էթիկայի խախտում է: Հիմա էլ խոսակցություններ կան, որ օպերացիոն բաժնի ավագ բուժքույր Ֆլորա Միքայելյանին ուզում է փոխարինել համապատասխան որակավորում չունեցող իր համախոհներից մեկով:

«Հրապարակ»-ի հետ զրույցում **Հովհաննես Օհանյանը** նշեց, որ ինքը նշված անձանցից որեւէ մեկին չի ստիպել դիմում գրել. «Փոխտնօրենն ինչ-որ անձնական խնդիրներ ուներ, դատական գործ էր, կարծեմ, ու ինքն է որոշել դիմում գրել: Վիրաբույժը տեղափոխվել է Ռուսաստան՝ աշխատանքի, անգամ իրեն չեմ էլ տեսել, դիմումը գրել գնացել է, իսկ նյարդաբանը 0,25 դրույք է աշխատել՝ ժամը 9-12-ը, բայց չէր ուզում այդ ժամերին աշխատել, ժամային գրաֆիկին չհարմարվելու համար է դուրս եկել աշխատանքից: Իսկ Ֆլորա Միքայելյանն ընդհանրապես աշխատանքին չի տիրապետում: Իր մասով բազմաթիվ թերացումներ ենք հայտնաբերել: Ընդհուպ վիրահատարանի գույքը, որը պատկանում է վիրահատարանին, գտնվում է առանձին տեղ՝ լրիվ վիրահատարանից դուրս պահած բժշկի սենյակում: Բացատրագիր է գրել, նշել, որ պահեստում տեղ չկար, բայց վիրահատարանի պահեստում շատ տեղ կար: Օրինակ, մի գործիքը, որ արժեր 300 հազար դրամ, մենք պատրաստվում էինք նորը գնել, որովհետեւ չգիտեինք, որ ունենք: Թե հիմա անձով է պայմանավորված եղել, կոնկրետ էդ վիրահատարանի վարիչի սենյակում է եղել, թե իրենք ինչ նկատառում են ունեցել, որ հետո էդ գույքն ինչ պետք է անեն, չեմ կարող անկեղծ ասել, չեմ ուզում ենթադրություններ արել: Իրավական մասով տվել եմ բացատրագիր գրել, ստացել է նկատողություն: Բուժքույրերի հետ վիրահատարանի ներսում իրենք ճաշ են պատրաստում, ո՞նց կարելի է դրա վրա աչք փակել»:

Անդրադառնալով վիրահատարաններում տեղադրված տեսախցիկներին, Օհանյանը հաստատեց այդ տեղեկությունը, սակայն նշեց, որ օրենքով սահմանված է, եւ կարող է վիրահատարանում տեսախցիկ լինել. «Իմ սենյակում մեծ էկրանի վրա միացված են տեսախցիկները, բայց բացառվում է, որ ինձ մոտ մտած մարդիկ տեսնեն, թե ինչ է կատարվում տեսախցիկներով: Դրանք տեղադրված են, որ խնդիրների դեպքում կարողանանք հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել: Երեւի վատ են զգում, որ տեսախցիկներ կան տեղադրված, եւ վիրահատարանի գույքը էլ չեն կարողանա դուրս բերել, քանի որ իրենք երբ ուզել են, վիրահատարանից ինչ գործիք ուզել են, հանել են: Իմ նկատողությունից հետո տեսախցիկով տեսել եմ, թե ոնց են էդ տարած գույքը տոպրակներով բերում»: Նա հերքեց, որ հիվանդասենյակներ շրջայցի ժամանակ կարող է ոչ պատշաճ տեսքով լինել՝ ընդգծելով, որ հիմնականում խալաթ է կրում: «Այս մասով էլ երեւի վրդովվել են, որ հսկում եմ, թե հիվանդներին ինչ դեղորայք են տալիս, ինչի համար է տվյալ դեղորայքը ցուցված բուժառուին: Բազմաթիվ դեպքեր են եղել, որ նշված դեղը բուժառուին ցուցված չի եղել, բայց տվել են: 30 տարի առաջ իրենք սովորել են, որ էդ դեղը պիտի ստանա հիվանդը, բայց ներկայում դա բժշկական գրականությունից հանված է»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԵՄ

ԻՆՉԻՑ Է ԱՅԴՔԱՆ ՎԱԽԵՑԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Փաշինյանի չկապակցված, կցկտուր խոսքը ցույց է տալիս, որ նա իսկապես վախեցած է, հնարավոր է, որ ապրիլի 1-ին Ռուսաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում նրան վախեցրել են այն հետեւանքներով, ինչին ընդունակ է Ռուսաստանը փաշինյանական իշխանության հակառուսական գործողություններին հակազդելու համատեքստում: Փաշինյանը որոշել է խորամանկել եւ փոխել նախընտրական քարոզչության արտաքին քաղաքական գիծը. եթե մինչեւ Մոսկվա գնալը նա արեւմտյան աշխարհի եւ նրա քաղաքականության ներկայացուցիչն էր Հայաստանում, որը Հայաստանը տանում է դեպի զարգացող եւ առաջադեմ ԵՄ-ին անդամակցելու ճանապարհով, ստիպված լինելով կռվել նենգ Մոսկվայի եւ նրա հայաստանյան դրածոների սանձազերծած հիբրիդային պատերազմում, հիմա միանգամից դարձել է Հայաստան-Ռուսաստան բարեկամության եւ եղբայրության երդվյալ կողմնակից, որը պայքարում է այդ բարեկամությունը ոչնչացնել փորձողների դեմ: Դա, իհարկե, ժամանակավոր է, ընդամենը երկու ամսից էլ քիչ, մինչեւ քվեարկության հաջորդ օրը:

Նման շրջադարձի պատճառն այն է, որ տեսնում է, որ Ռուսաստանի կողմից ուղարկվող ազդակները հասել են Հայաստանի ընտրողներին, մարդիկ, հատկապես բանականության հետ կապը չկորցրածները, նրանք, ովքեր գիտակցում են իրենց ու երկրի շահերը, հասկանում են, որ Ռուսաստանի հետ թշնամացման քաղաքականությունը կործանարար հետեւանքների է հանգեցնելու, եւ դրանից խուսափելու միակ ելքն իրենից ազատվելն է: Դրա համար փորձում է խաբեության դիմել, համոզել, որ Ռուսաստանի հետ հարաբերություններում ամեն ինչ լավ է, ինքը Հայաստանի միակ ռուսամետ, Ռուսաստանի դաշնակից եւ բարեկամ գործիչն է, Սամվել Կարապետյանն էլ ոչ թե Ռուսաստանից է ուղարկվել, այլ՝ Ռուսաստանի թշնամի երկրների ազդեցության գործակալն է՝ Հայաստան-Ռուսաստան դաշինքը ոչնչացնելու հանձնարարությամբ:

ԱԺ-ում հերթական անգամ բեմականացված հարցուպատասխանի ժամանակ հոգեխանգարմունքի մեջ գտնվող Փաշինյանը Սամվել Կարապետյանին մեղադրեց օտարերկրյա ազդեցության գործակալ լինելու, հայ-ռուսական բարեկամության դեմ աշխատելու եւ նույնիսկ ԵԱՏՄ-ն ոչնչացնելու ցանկության մեջ: Պատկերացնում եք՝ մարդ ինչ հոգեբանական վիճակի մեջ պետք է լինի, որ նման մեղադրանք հնչեցնի: Մնում էր, որ հայտարարեր, թե Կարապետյանը գործում է ԱՄՆ-ի կամ ԵՄ երկրների հատուկ ծառայությունների ցուցումով, բայց համենայնդեպս ասաց, որ նա ոչ թե «ռազվեդչիկ» է, այլ՝ ինոգենտ, հատուկ ռուսերեն, որ Ռուսաստանում լավ հասկանան Կարապետյանի ով լինելը եւ հեռու մնան, զգուշանան նրա քայքայիչ գործունեությունից:

Խոսելով Կարապետյանի զգուշացումների մասին, որ Փաշինյանի վերընտրվելը կարող է հանգեցնել Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների վատթարացման, Փաշինյանն ասում է. «Փորձ է անում հրահրել ՀՀ-ՌԴ կոնֆլիկտ՝ էդ կոնֆլիկտի վրա ձեռքները տաքացնելու համար: Ես անհնար եմ համարում այդպիսի բանը, 2018 թվականին հիշու՞մ եք՝ ինչեր էին ասում, 2021 թվականին էլ էին ասում: Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերություններն այսօր գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա, քան երբեւէ եղել է: Նայեք Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարների հանդիպումների դինամիկան եւ համեմատեք նախորդ շրջանների հետ»:

Եկեք համեմատենք դինամիկան. Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք ՌԴ նախագահը Հայաստան է եկել 2 անգամ, մեկ անգամ՝ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման օրոք: Նիկոլ Փաշինյանի վարչապետության օրոք եկել է 2019-ին եւ 2022 թ. նոյեմբերին՝ մասնակցելու Երեւանում կայանալիք ՀԱՊԿ անվտանգության խորհրդի նստաշրջանին: Հաջորդ տարի Հայաստանը սառեցրել է իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին, եւ նույն թվի հոկտեմբերի 3-ին Հայաստանի խորհրդարանի ՔՊ-ական մեծամասնությունը վավերացրել է Միջազգային քրեական դատարանի հիմնարար պայմանագիրը՝ Հռոմի ստատուտը: ՄՔԴ-ն քրեական հետապնդում էր հարուցել ՌԴ նախագահի նկատմամբ, պարտավորեցնելով պայմանագրին միացած երկրներին՝ կալանավորել եւ դատարանին հանձնել ՌԴ նախագահին: Դրանից հետո Պուտինը Հայաստան չի այցելել, ու քանի դեռ Հայաստանում Փաշինյանն իշխանության է, չի էլ այցելի:

Նիկոլ Փաշինյանը խորհրդարանի իր ելույթում դեմագոգիկ կերպով Սամվել Կարապետյանին է մեղադրում ԵԱՏՄ-ն ոչնչացնելու ցանկության մեջ, այն դեպքում, երբ Կարապետյանը որեւէ իշխանություն չունի եւ չի կարող որեւէ ձեւով ազդել ԵԱՏՄ-ի գոյության վրա, մինչդեռ ինքը հռչակել է Հայաստանը ԵՄ տանելու նպատակ, իր խմբակցությունն իր հրահանգով օրենք է ընդունել, եւ սպասում են ԵՄ-ից ազդանշանի, որ դուրս գան ԵԱՏՄ-ից: Մինչդեռ այդքանից հետո ասում է. «Էդ մարդիկ որ էդպես խոսում են եւ ուզում են էդպիսի սադրանքներ անել, էդ մարդիկ ուզում են ԵԱՏՄ-ն կաթվածահար անել: Ես ուզում եմ հիշեցնել, որ մենք ԵԱՏՄ անդամ երկիր ենք եւ մենք ԵԱՏՄ անդամ 5 երկրներից մեկն ենք, որ որոշումներ է կայացնում: Այդ մարդիկ, ովքեր ընտենց սադրանքներ են անում, ուզում են ԵԱՏՄ-ն որպես կազմակերպություն ոչնչացնել, որ իրենց ունեցվածքը փրկվի: Մեկ է՝ իրենց ունեցվածքը չի փրկվի, այնպես որ, ավելի լավ է՝ ԵԱՏՄ-ն սադրանքների մեջ չներքաշեն: Ես ասում եմ՝ մենք ՌԴ-ի հետ չենք վիճել, չենք վիճում, չենք վիճելու»: Տեսնում եք՝ ինչ հախուռն, անտրամաբանական խոսք է. ի՞նչ կապ ունի Կարապետյանի սեփականությունը ԵԱՏՄ-ի ոչնչացման հետ, ինքն է ամեն անգամ խոսում ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի անհամատեղելիության, ԵՄ-ին միանալու դեպքում ԵԱՏՄ-ից դուրս գալու մասին:

Ինչո՞ւ է Փաշինյանը հայտնվել նման վիճակի մեջ, ինչ է տեղի ունենում նրա հետ: Մարդիկ համոզվում են, որ նրա գոյությունն իշխանության ղեկին վտանգում է Հայաստանի եւ յուրաքանչյուրի գոյությունը եւ բարեկեցությունը, Ռուսաստանն ավելի ու ավելի համոզիչ է ցույց տալիս, որ ՀՀ քաղաքացիները պետք է ընտրություն կատարեն Փաշինյանի եւ իրենց երկրի ու անձնական բարեկեցության միջեւ, մինչեւ քվեարկության օրն այդ ազդանշաններն ավելի բացահայտ են լինելու: Փաշինյանը գիտի, որ չի կարող ասել՝ դե, եթե Ռուսաստանն ինձ ու իմ իշխանությանը պատերազմ է հայտարարել, ես ընդունում եմ մարտահրավերը: Չի կարող նման բան ասել, որովհետեւ այդ պատերազմում մենակ է մնալու եւ, ինչպես իր բոլոր պատերազմները, պարտվելու է: Դրա համար որոշել է հերթական անգամ գժական գնալ. իրեն հայտարարել Ռուսաստանի բարեկամ եւ դաշնակից, իսկ Սամվել Կարապետյանին՝ Ռուսաստանի թշնամի, թշնամիների գործակալ եւ այդ հիմքով չգրանցել նրա կուսակցությունը, դա ներկայացնել որպես ի պաշտպանություն Ռուսաստանի, ԵԱՏՄ-ի արված քայլ: Մի անգամ գժական գնաց՝ կորցրինք Արցախը: Չեմ ասում, թե այս անգամ կկորցնենք երկիրը, որովհետեւ, ի տարբերություն 2019-2020 թթ., հասարակությունը հասունացել է եւ հասկանում է՝ ինչ է կատարվում, եւ այս անգամ ինքը կկորցնի իշխանությունը: Երկրի ներսում գժական գնալը կարող է անպատիժ մնալ, միջազգային հարաբերություններում հոգեկան անհավասարակշիռ վարքը նույնիսկ խղճահարություն չի առաջացնում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ

Հայաստանում հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների հետ կապված քննարկումները հիմնականում երկու հարթության վրա են տեղի ունենում: Առաջինը ներքաղաքական հարթությունն է, որպես հնգամյակի կարեւորագույն իրադարձություն ներհայաստանյան կյանքում, որը կարեւոր դեր է խաղալու երկրի կյանքում, եւ այդ կարեւորությունը բոլորն են հասկանում: Երկրորդը Ռուսաստան-Արեւմուտք մրցակցության հարթությունն է, որտեղ առանցքայինը «ԵՄ, թե ԵԱՏՄ» դիլեման է, դրանից բխող՝ «Թրամփի ուղին», Երեւանի եւ Մոսկվայի միջեւ գործող կոնցեսիոն համաձայնությունների ճակատագիրը: Սակայն, ըստ քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովի, կան նաեւ այլ հարթություններ, որոնց մասին հազվադեպ է խոսվում, քանի որ դրանք նվազ հետաքրքրություն են ներկայացնում:

Առաջիկայում կայանալիք խորհրդարանական ընտրությունների մասով հետաքրքիր է նաեւ հայկական սփյուռքի մասնակցությունն ու ունեցած ազդեցությունն ընտրությունների վրա: Սփյուռքն այս առումով հստակ զանազանված է: Ռուսաստանաբնակ հայերի քաղաքական համակրանքը կարծես թե ռուսամետ կուսակցությունների կողմն է, որոնք գործում են Հայաստանում՝ կարծում է ռուս քաղաքագետը: Այլ կերպ չէր էլ կարող լինել, հաշվի առնելով Ռուսաստան պետության առանձնահատկությունները: Մյուս երկրներում ամեն բան մի փոքր այլ է: Այսպես. ապրիլի 11-12-ին Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացած Սփյուռքի հայության մոբիլիզացիոն հավաքը՝ Սփյուռքի զորաշարժի համաժողովը նույնպես այս համատեքստում է դիտում Մարկեդոնովը: Ֆրանսիայում, մոտավոր հաշվարկներով, ապրում է 350-500 հազար հայ: Առավել խոշորը Փարիզի, Լիոնի եւ Մարսելի հայկական համայնքներն են: Հայազգի գործիչները կարեւոր տեղ են զբաղեցնում ֆրանսիական կյանքի շատ ասպարեզներում՝ քաղաքականությունից մինչեւ բիզնես: Մոբիլիզացիոն հավաքը կամ համաժողովը, որը կայացավ Փարիզում, հյուրընկալել էր 150 ներկայացուցչի՝ Հայաստանից եւ աշխարհի 26 երկրից: Կազմակերպիչը EAFJD-ն՝ Արդարության եւ ժողովրդավարության եվրոպական հայկական ֆեդերացիան: Զգալի էին նաեւ ՀՅԴ աջակցությունն ու ներկայությունը կոնգրեսին: Ըստ Մարկեդոնովի, միջոցառումն արձանագրեց Հայաստանում ներկայում տիրող քաղաքական իրավիճակի լրջությունը, որը կարելի է համարել որպես սփյուռքյան մեկնաբանություն կամ արձագանք: Խիստ քննադատության ենթարկվեց Հայաստանի կառավարության որդեգրած կուրսը հատկապես Հայ առաքելական եկեղեցու հանդեպ: Շատ քննադատություններ հնչեցին նաեւ Նիկոլ Փաշինյանի հասցեին՝ Հայոց ցեղասպանության հանդեպ որդեգրած անընդունելի կեցվածքի համար: Ղարաբաղը եւս այն տրավմատիկ հարցերից է, որը հուզում է հայությանը:

Ըստ էության փաստվեց, որ հայկական միջավայրում գոյություն ունի երկու օրակարգ՝ սփյուռքի օրակարգ եւ Հայաստանի կառավարության օրակարգ: Ի՞նչ է սա նշանակում: Թերեւս այն, որ արեւմտյան ճակատում եղած հայության մեջ կարծիքները միատարր չեն, եւ զուտ հայկական հարցերի հետ կապված՝ Փաշինյանի կաբինետի հետ լուրջ տարաձայնություններ կան: Իսկ սպասվող խորհրդարանական ընտրություններից առաջ դա հասկանալը եւ նկատի ունենալը շատ կարեւոր են:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԵՆՔ ԶԱՐՄԱՆԱ, ՈՐ ՄԻ ՕՐ ՍԱ ԼԱՅՎ ՄՏՆԻ՝ ՄԱՐԴ ՈՒՏԻ, ԵՎ ՄԱՐԴԻԿ ԴԱ ԱՐԴԱՐԱՑՆԵՆ

*Հարցազրույց ճարտարապետ, քաղաքաշինարար եւ հետազոտող **Սարհատ Պետրոսյանի** հետ:*

- Քաղաքաշինական ինչ խնդիրներ կան այսօր Հայաստանում, հատկապես՝ մայրաքաղաքում: Պահպանվում են սահմանված շինարարական չափանիշներն ու կանոնները, չի՞ աղավաղվում քաղաքների տեսքը:

- Խնդիրների մասին երկար ենք խոսել, իրականում, դրանք նույնն են՝ մի տարբերությամբ, որ մենք ունենք ծավալների մեծացում: Այսինքն, եթե 10-15 տարի առաջ Երեւանում սահմանափակ թվով շենքեր էին կառուցվում, Հյուսիսային պողոտա եւ այլն, հիմա ամբողջ քաղաքն է կառուցվում, որն իր հետ շատ ավելի մեծ խնդիրներ է բերում: Խնդիրներ, որ

պլանավորված չեն եւ իրականացվում են ցաքուցրիվ, ինչպես պատահի: Եվ դա տեղի է ունենում հանրային միջոցների հաշվին, որն ամենացավալին է: Այսինքն, եկամտային հարկի վերադարձի ինստիտուտը, որ մենք ներդրեցինք, որը բերեց բնակարանային կամ կառուցապատման բիզնեսի զարգացում, դրա ֆինանսավորողը մենք ենք, մեր հարկերից է: Ճիշտ է, դրա մեջ լավ բան կա, որ մարդիկ նոր տուն են ունենում, բայց թվերը վախենալու են: Այս տարի Հայաստանը 250 մլն դոլար պետք է սպասարկի միայն եկամտային հարկի վերադարձի տոկոսները, եւ այդպես շարունակ 10-15 տարի: Այս խնդիրը, որ մեզ համար ստեղծել են վերջին 7-8 տարիների ընթացքում, միայն եկամտային հարկի վերադարձի մասով 2,5-3 միլիարդ դոլարի պարտք ենք հավաքել, որի մասին չի խոսվում, եւ չեն հաշվում ընդհանուր պարտքի մեջ, որ տալու ենք բանկերին: Եվ ամենակարեւորը, երբ քաղաքային նոր տներ ենք կառուցում, ենթակառուցվածքների փողը նորից տալիս է պետությունը: Այսինքն, այն 3 միլիարդ պարտքը, որ մենք ձեւավորեցինք միայն եկամտային հարկի վերադարձով եւ որը պետք է վճարենք 10-15 տարվա ընթացքում, դրանից բացի, մոտավոր հաշվարկով, մի այդքան էլ ծախս նստելու է հարկատուների վրա, երբ լուծենք այդ նոր կառուցապատվող տարածքների ճանապարհի, դպրոցի, մանկապարտեզի, ջրի ու գազի եւ նման հարցերը: Սա առաջին հայացքից կարճաժամկետ կտրվածքով շատ բարի տպավորություն թողնող նախաձեռնություն է, բայց գնաց շատ սխալ ուղղությամբ, եւ որի համար մենք շատ թանկ ենք վճարելու: Սա այս պահի ամենամեծ խնդիրն է, որը բոլորովին նոր չէ, եղել է նաեւ նախկինում: Այսինքն, կոռուպցիոն սխեմայով քաղաքի զարգացումը եղել է նախկինում, հիմա էլ է շարունակվում, եւ ոչ մի տարբերություն չկա, պարզապես գումարներն են շատացել եւ ծավալները: Բայց սա շատ մեծ խնդիր է, որը պետությունն իբր փորձում է լուծել: Ասում է՝ Երեւանում եկամտային հարկի վերադարձ չեմ տալիս, տալիս եմ շրջակա մարզերի համար: Եվ մենք նույն խնդիրը, որ Երեւանում ենք ստեղծել, ստեղծում ենք շրջակա մարզերում:

Երբ Աշտարակի խճուղով գնալիս անցնում ենք կամուրջը, տեսնում ենք՝ պատմական այդ գեղեցիկ կենսապատկերի, լանդշաֆտի մեջ բազմահարկ մի շենք է աճել: Երբ մտնում ենք Էջմիածին եւ տեսնում մայր տաճարը՝ իր ողջ վեհությամբ, եւ Հռիփսիմեն, հանկարծ տեսնում ենք, որ բազմահարկ շենքեր են բարձրանում շրջակայքում: Իսկ Քանաքեռավանը, որ գյուղական բնակավայր է, այնտեղ հսկայական թաղամասեր են կառուցվում: Նույնը կարելի է ասել Երեւանի շրջակա մյուս տարածքների համար, եւ այսպես փչացնում ենք ողջ Հայաստանի քաղաքային բնակավայրերը՝ պետության կողմից սուբսիդավորելով մի նախաձեռնություն, որի մեջ գուցե կա լավ ցանկություն, բայց գնում է լրիվ սխալ ուղղությամբ:

- Բայց կան Երեւանի եւ մյուս քաղաքների գլխավոր հատակագծեր: Արդյո՞ք դրանք հաշվի չեն առնվում եւ խախտվում են այդպես կոպտությամբ:

- Միանշանակ, հաշվի չեն առնվում: Բերեմ մի պարզ օրինակ. ակադեմիական քաղաքը, որ հիմա քննարկվում է, եւ պետությունը ֆինանսավորում է, այդ տեղը Երեւանի նախորդ գլխավոր հատակագծով նախատեսված էր որպես անտառային տարածք: Դա Երեւանի ռեզերվային տարածքն էր, որտեղ մենք պետք է վերականգնեինք մայրաքաղաքում կորցրած մեր կանաչ տարածքները, բայց այդտեղ հիմա կառուցապատվում է պետության կողմից՝ վարչապետի ուղիղ հանձնարարությամբ: Եթե երկրի կառավարությունը չի հարգում քաղաքաշինության կառուցակարգերը, դեմ է գնում դրանց, որոնք մասնագետները մտածել եւ հաշվարկել են, ինչո՞ւ պետք է Աշտարակի կամ Վաղարշապատի համայնքապետը հետեւի քաղաքային պլանավորման փաստաթղթին: Ոչ ոք չի հետեւի:

- Ամեն անձրեւից հետո Երեւանի փողոցներով գետեր են հոսում՝ վերածվում լճակների՝ ծածկելով անգամ ավտոմեքենաներ: Փողոցներ էլ կան, որ կոյուղաջրերը հոսում են գետնի վրայով: Չեն գործում ջրահեռացման եւ կոյուղատար համակարգերը, խնդրի լուծումը մեկը մյուսի վրա է գցում: Ո՞վ է դրա պատասխանատուն:

- Այդ մասին մենք 5 տարի առաջ բարձրաձայնում էինք Երեւանի քաղաքապետարանում, մեզ ասում էին՝ դա մեր խնդիրը չէ, դա «Վեոլիայի» խնդիրն է: Իսկ մենք ասում էինք՝ եթե մարդիկ Երեւանում չկարողանան տեղափոխվել, դա քաղաքապետարանի խնդիրն է, ոչ թե՝ «Վեոլիայի»: Հիմա ամեն երկուշաբթի շատ լուրջ դեմքով հաթաթաներ են տալիս «Վեոլիային», թե չի սպասարկում հեղեղատար համակարգը: Եվ սա՝ այն դեպքում, որ մենք՝ Երեւանի քաղաքացիներս, եւ ընդհանրապես ՀՀ-ն չի վճարում «Վեոլիային» հեղեղատար համակարգի պահպանության համար: «Վեոլիան» ունի երկու սակագին. բնակավայր, որտեղ ջուր է մատակարարում, եւ բնակավայր, որ հեռացնում է նաեւ կոյուղաջրերը: «Վեոլիային» Հայաստանում ոչ ոք չի վճարում՝ հեղեղատար համակարգ պահելու համար: Երեւանը հեղեղատար համակարգի համար, ֆորմալ առումով, ծախսում է զրո դրամ եւ դրա պատճառով էլ այդ վիճակում է: Իսկ ինչո՞ւ չի վճարում. որպեսզի ջրի սակագնի վրա չազդի: «Վեոլիան» ասում է՝ եթե ուզում ես, որ ես կեղտաջրերի պատշաճ հեռացում կազմակերպեմ, եթե ուզում ես 24-ժամյա ջրամատակարարում ապահովեմ, սակագինս վերանայիր: Իսկ մենք չենք վերանայում, փող չենք տալիս, որպեսզի ընտրություններից առաջ սակագնի փոփոխություն չլինի, որ գլուխ գովենք՝ այ, տեսեք, մեր ժամանակ սակագինը չի փոխվել: Եվ դա բերում է նրան, որ մենք ստանում ենք վատ ծառայություն: Քաղաքապետարանն էլ այդ փողով համերգներ է կազմակերպում, տոնածառ է դնում եւ այլն: Գուցե ավելի առաջնային խնդիրնե՞ր կան, գուցե կարելի է տոնածառի վրա քիչ փող ծախսել եւ փոխարենը ծախսել հեղեղատարի՞ վրա: Մենք՝ որպես երեւանցիներ, որ մեր պատվիրակած լիազորությունները տվել ենք քաղաքապետարանին, այդ պրոցեսի մեջ կա գրեթե զրո դրամ՝ հատկացված հեղեղատար համակարգին: Ուստի մենք անընդհատ ունենալու ենք հեղեղատարի խնդիրներ, որն ունի նաեւ պատճառներ. նախ, կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ եղանակային կտրուկ փոփոխություններն են, հաջորդը՝ կառուցապատման պատճառով նվազում են ջրաթափանց կամ ջուրը ներծծող մակերեւույթները քաղաքում: Ջուրը չի ներծծվում Քանաքեռում կամ Ձեյթունում կամ Մասիվներում ու գալիս լցվում է ներքեւ՝ մինչեւ Մաշտոցի պողոտա, իսկ հեղեղատար համակարգը չի աշխատում: Այնպես չէ, որ միայն հեղեղատար համակարգը մաքրելով կարող ենք այդ հարցը լուծել: Մենք նաեւ մեր ներգործությամբ՝ սխալ կառուցապատման արդյունքում կանաչ տարածքները նվազեցնելու պատճառով բերում ենք նրան, որ ունենում ենք ավելի շատ մակերեւութային ջրերի հավաքում, ինչն էլ չենք կարողանում հեռացնել, եւ ստացվում է այդ պատկերը: Սա կոմպլեքս խնդիր է: Դու չես կարող շենքեր կառուցելու համար, առանց մտածելու շինթույլտվություններ տալ՝ որտեղ պատահի, իսկ հետո գաս ասես՝ վայ, հեղեղատարս չի աշխատում: Միեւնույն է, եթե համակարգն էլ աշխատեց, արդյունք չես ունենալու, որովհետեւ ավելի շատ մակերեւութային ջուր ունես, քան սրանից 15 տարի առաջ էր: Ինչո՞ւ: Որովհետեւ դու կառուցեցիր ավելի շատ, նվազեցրիր կանաչ, կանխարգելող մակերեւույթները:

- Իսկ քանդուքարափ ասֆալտի համար ե՞լ է «Վեոլիա ջուրը» պատասխանատու: Ամեն օր տեսնում ենք ջարդուխուրդ լինող մեքենաներ, որոնց վնասը որեւէ մեկը չի պատրաստվում փոխհատուցել քաղաքացուն:

- Որ քաղաքը վատ է կառավարվում բոլոր ուղղություններով, բոլորս համաձայն ենք, խնդիրներ ունենք եւ տրանսպորտի, եւ ճանապարհների, եւ բազմաթիվ այլ առումներով: Փող են աշխատում օրինական եւ ոչ օրինական ճանապարհներով՝ ինչքան կարող են եւ, վերջին հաշվով, թքած ունեն հանրության հարմարավետության վրա: Իրենց ավելի շատ հետաքրքրում են ֆեյսբուքյան, ինստագրամյան արդյունքները: Կտրում են փողոցներում մեր բազմամյա ծառերը եւ տնկում են ծառեր, որոնք ծաղկում են, բայց ստվեր չեն տալիս: Փոխարենը՝ դրանց լուսանկարները կարող են դնել ինստագրամում եւ ստանալ լայքեր, բայց չեն մտածում հիմնական խնդիրների մասին, որ առաջնայինը ոչ թե լուսանկարն է, այլ՝ մեզ մաքուր օդ տալը: Այդպիսին է ողջ տրամաբանությունը: Իսկ ասֆալտ պահելը եւ մյուս խնդիրները համակարգ են, պիտի աշխատես, դու չես կարող մի բան անել մի անգամ ու թողնել գնալ: Ինչպես աղբահանության հարցն իբր լուծվեց, բայց մենք տեսնում ենք, թե ինչ է կատարվում աղբահանության հետ: Այս ամենն ամենօրյա աշխատանք է, որ չի արվում, այսինքն՝ քաղաքը կառավարվում է վատ: Այնպես չէ, որ մինչեւ այս շատ լավ էր կառավարվում: Բայց դու պետք է պատրաստ լինես շարունակ կատարելագործվելու եւ ամենակարեւորը՝ քննադատություն ընդունելու: Սրանից 10 տարի առաջ, այս հարցազրույցի արդյունքում, մենք ավելի շատ ազդեցություն էինք ունենալու քաղաքապետարանի չինովնիկների վրա՝ որոշումներ ընդունելու մեջ: Իսկ հիմա իրենք թքած ունեն եւ՛ հանրության, եւ՛ մասնագիտական կարծիքի վրա, դրա համար էլ ստացվում է այն, ինչ ստացվում է:

- Այսպես քաղաքը «կառավարելով», երկրի սահմանները զիջելով, արժեքներն ուրանալով ու մոռացության մատնելով ո՞ւր ենք հասնելու: Արդյո՞ք անկախություն ու ինքնուրույնություն ենք ձեռք բերում, ինչպես այս իշխող խմբակն ու իր պարագլուխն են ասում:

- Մենք գործ ունենք մի խմբակի հետ, որ երկար տարիներ երազել է գալ իշխանության, որ ստացել է եւ պատրաստ է այդ նույն իշխանությունը պահելու համար զոհել ամեն ինչ, բառի բուն իմաստով՝ ամեն ինչ: Չենք զարմանա, որ մի օր սա հեռուստացույցով լայվ մտնի՝ մարդ ուտի, եւ մարդիկ արդարացնեն: Այդ տեսակ բարոյականության մեջ ենք մենք ապրում: Իրենց համար Արարատ, Արագած՝ թքած ունեն, կարեւորն իրենց երազանքների իրականացումն է: Այն բոլոր բարդույթները, որ տարիներով կուտակել են իշխանության համար կռիվ անելով եւ ստացել են, դա ամեն գնով պահպանելու են: Չփորձենք գաղափարական հենք գտնել այս ամեն ինչի մեջ: Վաղը կամ մյուս օրն իրենք պատրաստ են «թագավորել» միայն Երեւանի վրա, միայն թե կարողանան իշխել: Իրենք բոլոր արժեքների վրա եւ մեր՝ բոլորիս վրա թքած ունեն: Եվ այդ առումով ընդհանրապես կարիք չկա քննարկելու՝ ինչ են իրենք անում: Վաղը չէ մյուս օրն Արագածին էլ են նույնկերպ վերաբերվելու, ինչպես Արարատին են վերաբերվում այսօր: Որովհետեւ նպատակը մեկն է՝ մնալ իշխանության, մնալ կենդանի՝ այսպես ասած, եւ դրա համար պատրաստ են ցանկացած վայրենության:

Հուսիկ Արա

ԱՄԵՆԱՄԵԾ ՎՏԱՆԳԸ ՆԵՐՔԻՆ ՊԱՌԱԿՏՈՒՄՆ Է, ՈՐ ԲԵՐՈՒՄ Է ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Իմ զրուցակիցն է գրող, հրապարակախոս, բանաստեղծ, «Երջանիկ տարեցներ» գիտամշակութային միության նախագահ, 44-օրյա պատերազմի մասնակից **Աշոտ Դալլաթյանը**:*

- Ինչպե՞ս կբնութագրեք այսօրվա վիճակը՝ ազգային, հոգեւոր, մշակութային, քաղաքական համատեքստում:

- Այսօրվա Հայաստանը միաժամանակ եւ ցավի մեջ է, եւ որոնման: Պետականությունն արտաքինից կարծես կայացած է, բայց ներսում կա խոր արժեքային ճգնաժամ: Ազգային մտածողությունը նահանջում է, գալիս է անհատական շահի գերակայությունը: Մենք փորձում ենք նմանվել ուրիշներին՝ մոռանալով, որ մեր ուժը մեր տարբերության մեջ է: Երբ երիտասարդը չգիտի իր պատմությունը, իր մշակույթը, իր երգը, իր լեզվի խորքը, դառնում է հեշտ կառավարվող: Երկրորդը հոգեւոր դատարկությունն է: Երբ հավատը դառնում է ձեւական, այլ ոչ թե ապրող արժեք, մարդը կորցնում է իր ներքին ողնաշարը: Իրավիճակային խնդիրները ժամանակի ընթացքում լուծվում են՝ քաղաքական փոփոխություններով, տնտեսական վերադասավորումներով: Բայց երբ ճգնաժամը դառնում է արժեքային, այն ներթափանցում է մարդու մտածողության մեջ: Մարդիկ փորձում են հարմարվել, գոյատեւել, բայց ոչ՝ պահել իրենց ինքնությունը: Սա արդեն վտանգի ազդանշան է:

- Այսինքն՝ կարծում եք, որ չափազանցություն չեն այն ահազանգերը, որ մեր ազգային ինքնությունն իրական վտանգի տակ է:

- Ազգային ինքնությունը չի կորչում միանգամից: Այն մաշվում է լեզվի նկատմամբ անտարբերությունից, պատմության նկատմամբ մակերեսային վերաբերմունքից, մշակույթի նկատմամբ ձեւական հետաքրքրությունից: Ամենավտանգավորն այն է, որ մարդը կարող է չզգալ այդ կորուստը: Նա կարող է ապրել, աշխատել, հաջողության հասնել, բայց ներսում այլեւս չունենալ կապն իր ժողովրդի հետ: Այդ պահին նա դառնում է անհատ, բայց ոչ՝ ազգային միավոր: Մեր հոգեւոր հիմքը թուլացել է: Այսօր տեսնում ենք հակասություն՝ մարդը կարող է արտաքուստ լինել հավատացյալ, բայց իր վարքում չարտահայտել այդ հավատը: Սա նշանակում է, որ հոգեւոր արժեքները չեն դարձել ներքին ուղեցույց: Երբ մարդը կորցնում է իր ներքին սահմանները, նա սկսում է արդարացնել նույնիսկ այն, ինչը նախկինում անընդունելի էր: Սա արդեն հոգեւոր թուլացման նշան է, եւ այս նշանով է առաջնորդվում հատկապես այսօրվա վարչակարգը, որն իրեն իրավունք է վերապահել խառնվել մայր եկեղեցու ներքին գործերին: Ամենայն հայոց հայրապետը միայն Հայաստանի կաթողիկոսը չէ, նա Ամենայն հայոցն է, նրա գոյությունը պայմանավորված չէ մեկ «մարդու» հիվանդագին դրսեւորումներով: Տեսնում եմ բարոյականության նահանջ, այն էլ՝ պետական մակարդակով: Բարոյականությունը հասարակության հիմքն է: Եթե այդ հիմքը խարխլվում է, մնացած բոլոր ոլորտները՝ քաղաքականությունը, տնտեսությունը, կրթությունը, դեֆորմացվում են: Տարբեր կարծիք ունենալը հաճախ ընկալվում է որպես թշնամություն: Սա բերում է վստահության անկման, եւ այս ամենի մեղավորը դարձյալ ներկա վարչակարգն է: Երբ մարդիկ չեն վստահում իրար, նրանք չեն կարող կառուցել միասնական հասարակություն, ավելին՝ պառակտվում են պետության ազգային-հոգեւոր-մշակութային-հասարաքաղաքական կյանքի հիմքերը, եւ պետությունը դատապարտվում է ձուլման այլ ազգերի մեջ: Բայց մենք՝ երիտասարդներս, մեր ընտրությամբ չենք թողնի, որ այս իշխանությունների որդեգրած ծրագրերն իրագործվեն: Մշակույթը պետք է լինի ինքնության պահպանման գլխավոր գործիքը, բայց այն լիարժեք չի կատարում այդ դերը: Ու դա դարձյալ այս իշխանությունների մեղքով է: Մենք ունենք ստեղծագործող մարդիկ, ունենք տաղանդներ, բայց հաճախ մշակութային կյանքը չի դառնում հասարակության մտածողության ձեւավորման գործոն: Ես մշակույթի գործիչներին ուզում եմ ասել՝ հարգելիներս, երբ հայրենիքն է վտանգի շեմին, գրիչն էլ զենք չէ, թուղթն էլ՝ մարտադաշտ: Տեսնում ենք՝ քաղաքականությունը դարձել է ոչ թե ծառայություն, այլ պայքար իշխանության համար: Դա է խարխլում պետության հիմնասյունը: Դա պիտի բացատրել մեր ժողովրդին:

- Դուք մասնակցել եք 44-օրյա պատերազմին:

- Պատերազմը մարդու մեջ մաքրում է ամեն ավելորդը: Այնտեղ հասկանում ես՝ ինչն է իրական արժեք: Ես տեսել եմ հերոսություն, տեսել եմ զոհաբերություն, եւ դա ինձ համար դարձավ կյանքի չափանիշ: Այսօր, երբ խոսում ենք հայրենասիրությունից, պետք է հիշենք, որ դա ոչ թե խոսք է, այլ՝ գործողություն: Երիտասարդությունը մեր ամենամեծ հույսն է, բայց նաեւ ամենամեծ պատասխանատվությունը: Երիտասարդը կանգնած է բազմաթիվ գայթակղությունների առաջ՝ հեշտ ճանապարհների, արագ հաջողության: Բայց պետք է հասկանալ՝ իրական արժեքը ստեղծվում է աշխատանքի, պայքարի եւ հավատքի միջոցով:

- Երիտասարդությունը ո՞րն է համարում ամենամեծ վտանգը Հայաստանի համար:

- Ամենամեծ վտանգը ներքին պառակտումն է, որ բերում է այս իշխանությունը: Երբ մենք սկսում ենք բաժանվել՝ քաղաքական, գաղափարական կամ անձնական հիմքերով, թուլանում ենք որպես ազգ: Թշնամին միշտ օգտվում է մեր ներսի բաժանումից, Հայաստանի համար ամենամեծ վտանգը, այո, ներկայիս կառավարությունն է: Ես երիտասարդներին հորդորում եմ՝ սիրել մեր երկիրը ոչ թե խոսքով, այլ՝ գործով: Ազգը չի կորչում, երբ պարտվում է, այլ երբ դադարում է հավատալ իրեն:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ԼԱՌՆԱԿԱ-ԵՐԵՎԱՆ

Բակում մեր հարեւան Շմավոնին տեսա… Տրամադրությունը լավ էր.

- Խե՞ր լինի,- հարցրի:

- Խեր ա, խեր ա:

- Ի՞նչ կա, մեջքդ արեւին ես տվել…

- Հա, վերջապես արեւ դուրս եկավ, բայց դա՝ դեռ հեչ: Իսկ դու իմացմ՞ր, որ մեր թոշակին ավելացած 10 հազարով կարող ենք 5 հատ Երեւան-Լառնակա՝ «տուդա-աբռատնի» տոմս առնենք:

- Շմավոն, հաստատ էլի ապուշ երազ ես տեսել:

- Ի՞նչ երազ, այ մարդ, ականջովս եմ լսել, ինքն ասաց:

- Ինքը՝ ո՞վ:

- Նիկոլը…

- Հասկանալի է…

- Ի՞նչն է հասկանալի:

- Դե որ Նիկոլն է ասել, ուրեմն Նիկոլն է հիմար երազ տեսել, պատմել է, դու էլ հավատացել ես:

- Բայց ի՞նչ կա չհավատալու, հասարակ թվաբանություն է: Մի հատ «տուդա-աբռատնին» 2 հազար դրամ է, չեղմ՝ 10 հազարի՝ 5 հատ «տուդա-աբռատնի» տոմս:

- Շմավոն ջան, դա ոչ թե հասարակ, այլ պարզունակ թվաբանություն է: Ավելին ասեմ՝ ցանկալին իրականության տեղ ներկայացնելու թվաբանություն: Նիկոլը քո ականջներից լապշա է կախել:

- Էլի՞ քաղաքականացրիր: Ի՞նչ դառը մարդ ես, լավ բանն էլ չես ուզում տեսնել:

- Լավ, մոռանանք: Իսկ ե՞րբ եք ուզում թռչել Լառնակա: Շողերին ի՞լ ես հետդ տանելու:

- Հա, իհարկե:

- Դե ուրեմն ինձ նախօրոք կասես, որ ավտոն բենզին լցնեմ, ձեզ տանեմ օդանավակայան:

- Կարիք չկա, տաքսի կկանչեմ:

- Տաքսին Աճառյան փողոցից «Զվարթնոց» առնվազն մի 6-7 հազար կուզի, ի՞նչ գործ ունես, դա երեք հատ «տուդա-աբռատնի» տոմս է:

Շմավոնի աչքերը բներում պտտվեցին հաշվիչի պես: Հակափաստարկ էր փնտրում, բայց չգտավ ու լուռ մնաց:

- Իսկ Լառնակայում հյուրանոց պատվիրե՞լ եք:

- Չէ, հյուրանոցով թանկ է նստում, Շողերի մորքուրի տղու տանն ենք մնալու:

- Շատ լավ է, Շմավոն ջան, իսկ նախաճաշ, ճաշ, ընթրիք…

- Դրանք մանր հարցեր են, դու գիտե՞ս ով է Շողերի մորքուրի տղեն: Մի Լառնակա՝ մի Սերոբ… Բոլորը ճանաչում են:

- Իսկ Սերոբին վերջին անգամ ե՞րբ եք տեսել…

Շմավոնը հայացքը դարձրեց երկինք՝ ուզում էր հիշել: Ապարդյուն:

- Հասցեն գոնե գիտե՞ք:

- Այ մարդ, դե կգտնենք էլի, ասի՝ մի Լառնակա, մի Սերոբ:

- Գիտե՞ս, թե ինչու եմ հարցնում, Շմավոն… Լառնակայի օդանավակայանից մինչեւ քաղաք տաքսին ամենաքիչը մի 50 եվրո կուզի: Դուք լավ կանեք՝ մինչեւ Լառնակայի «տուդա-աբռատնի» տոմս առնելը Սերոբին զանգեք, որ դիմավորի:

- Էդ մտածել ենք:

- Ապրես: Մեկ էլ Շողերին ասա՝ հաց-մաց դնի, «պռավիզ», ինքնաթիռ է՝ ուշանալ կա, շուտ հասնել կա: Օդանավակայաններում գիտես, թե ինչ թանկություն է: Մի բաժակ սուրճը 10 եվրո է, մի բաժակ ջուրը՝ 20: «Բագաժ» ունե՞ք…

- Չէ, հասարակ տոմս է, միայն ձեռքի պայուսակ են թողնում:

- Դա լավ չէ: Ուտելիք ու ջուր չեն թողնելու վերցնեք:

- Կդիմանանք, 3 ժամվա թռիչք է:

- Հա, իհարկե: Բայց դու ինձնից մի նեղանա, Շմավոն ջան, ես քեզ համար եմ անհանգստանում, որ հանկարծ Նիկոլի ստերի փայ էշ-նահատակ չդառնաս: Դու դեռ՝ հեչ, Շողերին էլ հետդ ես տանում: Դա արդեն կատակ չէ:

- Հիմա ի՞նչ ես առաջարկում, Լառնակա չգնամ՞ք:

- Գնացեք, ախպեր, չուզողը ես լինեմ, բայց տես՝ Լառնակայից չզանգես ինձ, թե մի բան արա՝ հետ գանք, մնացել ենք «աէրոպորտ»:

- Սերոբն էն տղեն չի, որ մենք «աէրոպորտ» մնանք:

- Ես էլ դա եմ ասում, փառք Աստծու, որ Սերոբի պես մարդ ունեք Լառնակայում, բայց լավ չէ, որ Սերոբի անունը տալու տեղ Նիկոլի ու նրա «տուդա-աբռատնի» տոմսերից ես խոսում: Ինքը շատ քիչ բան է հասկանում ուղեւորափոխադրումներից: Իր ամեն ինչը ձրի է՝ պետության հաշվին: Մեր պետությունը նրան կերակրում է, նրա «նաչլեգի» հարցերը լուծում է՝ քիչ է, Պուտինն էլ իր հերթին է տանում ճաշի ու ընթրիքի: Ո՛չ տաքսու փող է տալիս, ո՛չ սուրճի: Դու էլ ընկել ես Նիկոլի խելքին, թե թոշակի ավելացած մասով 5 անգամ կարող ես գնալ Լառնակա ու հետ գալ: Գնա, ի՞նչ ասեմ: Դիցուք՝ իմ թոշակի ավելացած մասով ես կարող եմ Խանջյան փողոցից մինչեւ Աճառյան փողոց 2,5 հատ «տուդա-աբռատնի» տաքսու տոմս գնել: Քո թոշակի ավելացված մասն ինչ է՝ իմ թոշակի ավելացված մասից շատ է, որ բոբիկացել, ընկել ես Նիկոլի ջրերը:

- Բա որ ասում եմ՝ դառը մարդ ես…

- Ի՞նչ արած, Շմավոն, թող քո ասածով լինի: Ձեզ բարի թռիչքներ, փափուկ վայրէջքներ, Սերոբին էլ՝ իմ կողմից լիքը բարեւներ…

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ՀՈԳՆԵՑՆԵԼԻՍ՝ ՎԱԽԵՑԵՔ ԱՆԱԿՆԿԱԼԻՑ

Մենք գորովանքով ու սիրով չենք հիշում ընտրական գործընթացները նախկիններիի օրոք: Ովքեր հիշում են, առնչվել են, շփվել են, ամեն ինչ էլ կարող են մտաբերել՝ թե՛ ընտրակաշառք, թե՛ անօրինականություններ՝ խախտումներ քվեարկության կամ հաշվարկների փուլում, կուտակումներ ընտրատեղամասերում, բռնություններ եւ այլն: Ինչ ասես եղել է տարբեր տարիներին՝ տարբեր ուժգնության ու տարբեր ինտենսիվության: Գնալով, իհարկե, բացասական երեւույթները պակասում էին, խախտումները՝ ավելի բարդանում եւ, ըստ այդմ, նվազում, բայց ընտրություններ, որոնց արդյունքներն աղտոտված չեն կասկածանքով ու թերահավատությամբ, Հայաստանում չեն պատահել:

Իսկ այսօր, երբ թվում է, թե ընտրախախտումների փուլը հեղափոխությամբ ընդհատվել է, ընտրական գործընթացն առավել քաղաքակիրթ չի դարձել, այլ այն ավելի ամոթալի, ցածր, շատ ավելի անընդունելի բնույթ է ընդունել ու առաջացնում է արդեն ոչ թե կասկած, այլ՝ զզվանք: Դժվար է ասել, թե որն է ավելի տհաճ՝ կասկածել ընտրությունների արդյունքներին, թե՞ զզվել դրանցից առանձին-առանձին ու ամբողջությամբ վերցրած՝ ամբողջ գործընթացից: Նախկինում ընդունված չէր այդպես մուրալ քվեներ, այդպես ամեն որպե թիրախավորել մրցակիցներին, վախենալ հրապարակայնորեն եւ պարծենալ արհեստականորեն: Նախընտրական գործընթացներին զուգահեռ, կյանքը շարունակվում էր իր գրեթե սովորական հունով, կառավարության աշխատանքը, Ազգային ժողովի նիստերն իրենց հունով առաջ էին գնում՝ ոչ ընտրական ժամանակահատվածների համեմատ շատ փոքր տարբերությամբ: Այսօր մենք արդեն հոգնել ենք դեռեւս չմեկնարկած քարոզարշավից, հոգնել ենք հետեւել, թե ինչպես է ամեն ճիգ գործադրվում՝ վերարտադրության համար, ինչպես ընտրություն չեն դնում միջոցների մեջ:

Եթե ընտրությունների ոճն ու բովանդակությունը վատն են, դրանում առաջին հերթին պետք է մեղադրել իշխող ուժին, որի ձեռքում են ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար անհրաժեշտ լծակները, ուժն ու իրավունքը: Իշխանությունների գործն է՝ լինել արդար ընտրությունների երաշխավորը երկրում:

Ի վիճակի՞ է այս իշխանությունը, որը տառապում է ընտրվելու մոլուցքով, ապահովել ընտրական նորմալ գործընթաց: Ընդ որում, ընտրությունների արդարությունը միայն ընտրակաշառքը բացառելու մեջ չէ. ընտրությունը պետք է լինի ազատ, արդար եւ թափանցիկ, իսկ այն բարոյահոգեբանական իրադրությունում, որը ստեղծել են այս իշխանություններն ընտրություններից առաջ, արդեն ազատ ընտրությունների մասին խոսք լինել չի կարող: Իշխող ուժն ամբողջ թիմով տեռորի է ենթարկում ընտրազանգվածին՝ ամեն եղանակով ու ամեն առիթով մրցակցային մթնոլորտում պահելով հանրությանը: Երկիրը նախընտրական տենդի մեջ է արդեն տեւական ժամանակ, մինչդեռ նախընտրական օրինական գործընթացները դեռ նոր են սկսվում, դեռ նոր են մասնակցության հայտ ներկայացնում ԿԸՀ, իսկ քարոզարշավը չի էլ մեկնարկել:

Եվ արդեն կարելի է գնահատել՝ երբ իշխանությունը հիվանդ է ընտրացավով, այդ տենդը թույլ չի տալիս առողջ ընտրական գործընթաց: Առողջ միջավայր՝ հավասար, արդար, ակնհայտորեն չկա: Ընդ որում, որքան իշխանությունը տենդագին ակտիվ է՝ լարված, կատաղած, ընդդիմությունը նույնքան հիվանդագին պասիվ է՝ անմիաբան: Այս պայմաններում ընտրողի համար մի բան է կարեւորվում. շուտ անցնեն այս երկու ամիսները, վերջանա այս լեզվակռիվը, անարդարությունների այս շքերթը, իրավապահ եւ դատական համակարգի ծաղրը, հանրության զգացմունքների, նպատակների եւ հույսերի նկատմամբ այս անամոթ արշավը:

Թալանչի նախկինների մասին բալլադներին այսօր ավելացել են կալուգացի օլիգարխի «արկածները», որոնք ամեն օր հեքիաթի պես պատմում են ՔՊ-ական պաշտոնյաները՝ մտածելով, թե նորից կարող են հեղափոխություն անել, չհասկանալով, որ իրենց կողմնակիցներն արդեն բավականին փոքրաթիվ են՝ հեղափոխական ալիք առաջացնելու համար: Ընտրություններից առաջ իշխանությունները մեծածավալ սոցիալական ծրագրեր են սկսում, թոշակների բարձրացում եւ այլն, ու դա, իհարկե, ոչ մի կերպ ընտրակաշառք չի կոչվում, իսկ մրցակից ուժերն այս օրերին ինչ էլ անեն, վտանգի տակ են ընտրակաշառքի հոդվածով: Նրանք այս օրերին լավ կանեն՝ անգամ թափառական երաժշտի գլխարկի մեջ մանրադրամ չդնեն, որովհետեւ դա կարող է դիտվել հանցագործություն: «Նրանց թվում է, որ իրենք կարող են գնել Հայաստանի ժողովրդին»,- ասում է մի երիտասարդ, բավականին տխրահռչակ պաշտոնյա, մարդ, որին թվում է, թե իրենք կարող են հերթական անգամ խաբել Հայաստանի ժողովրդին: Նրանց թվում է, թե զոռով-շառով, սպառնալիքով ու բռնությամբ՝ ամեն գնով, հնարավոր է պահել իշխանությունը, թեկուզ դա լինի ամենամեծ անօրինականությունների ու ամենատգեղ նվաստացումների ճանապարհով:

Ընտրողին նախապես այսպես հոգնեցնելը ոչ միայն տգեղ է, այլեւ՝ սխալ, քանի որ «իներտ դժգոհից» նա փոխակերպվում է «գործուն դժգոհի», որը կարող է գնալ ընտրատեղամաս: Այս վիճակին վերջ կդնի այն սառնասիրտ ընտրողը, որն այսօր անտարբեր հետեւում է նախընտրական անամոթությանը, դիտարկում է տեսածն ու լսածը՝ բժշկի նման: Այդ ընտրողը, որ դեռեւս չունի նախընտրած թեկնածու, թվում է՝ անվրդով ու հոգնած, դեռեւս մերժում է մաս կազմել ընտրական որեւէ գործընթացի, կարծես՝ չի գնալու ընտրատեղամաս, քանի որ բոլորից զզված է: Բայց այս բուռն ընտրատենդի պայմաններում մի մեծ անակնկալ մատուցելով այդ փութաջան «վերընտրվողներին», նա՝ այդ բժիշկ-ընտրողը, գնալու է եւ բուժելու է հիվանդոտ միջավայրը՝ քվեարկելով հանուն այսօրվա պաշտոնյաների դեմքերն այլեւս չտեսնելու եւ նրանց ընտրատենդից ծվծվան ձայներն այլեւս չլսելու:

Շաբե ԱՎՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 18.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՄՈՏԵՆՈՒՄ Է ԱՊՐԻԼԻ 24-Ը. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՅՆ ՀԻՇՈՒՄ ԱՄՆ-ՈՒՄ

Ապրիլը ԱՄՆ-ում կոչվում է Հայկական հիշողության ամիս՝ Հայոց ցեղասպանության գործոնով պայմանավորված: Եվ դա զուտ միայն հանրային հիշատակության օր չէ, այլ շատ նահանգներում օրենքով ամրագրված օր, ինչպես, օրինակ, Մասաչուսեթսում է, որտեղ նահանգապետը պարտավոր է ամեն տարի հանդես գալ համապատասխան հայտարարությամբ:

Միացյալ Նահանգներում այսօր ապրում է ավելի քան 1,2 միլիոն հայ: Հայությունը հատկապես կենտրոնացած է Կալիֆորնիա նահանգում, առավելապես՝ Լոս Անջելեսում: Ու հասկանալի է, որ Հայկական հիշողության ամսվա գլխավոր միջոցառումները հենց Կալիֆորնիայում են տեղի ունենում: Վերջին հինգ տարում, ինչպես գրում է armmuseum-ը, Armenian Heritage Month-ի՝ Միացյալ Նահանգներում զոհերի ոգեկոչման ֆորմատը բավականին ընդլայնվել է: Եթե նախկինում հիմնական միջոցառումները կենտրոնացած էին ապրիլի 24-ին եւ կապված էին Հայոց ցեղասպանության հիշատակի հետ, ապա այսօր հաճախ կարելի է լսել մշակութային ժառանգության եւ հպարտության, կոլեկտիվ տրավման հաղթահարելու կարողության ամրապնդման նպատակով միավորվելու մասին կոչեր:

Իսկ ի՞նչ միջոցառումներ են իրականացվում սովորաբար: ԱՄՆ բազմաթիվ համալսարաններում, գրադարաններում, դպրոցներում տեղի են ունենում լուսավորչական միջոցառումներ, երաժշտական հայտագրեր, հանրային դասախոսություններ, ֆիլմերի ցուցադրություններ, հանդիպումներ՝ հեղինակների կամ ռեժիսորների հետ: Փասադենայում, օրինակ, ցուցադրվել է Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը, անցկացվել են առանձին միջոցառումներ Հայոց պատմության եւ հայկական մշակութային ժառանգության մասին: Լոս Անջելեսի Հանրային գրադարանում անցյալ տարվանից գործարկվել է Armenian Heritage Through Film ծավալուն կինոցուցադրությունների ծրագիրը: Անցյալ տարի էլ ցուցադրվել է հայկական սփյուռքի ամենահայտնի ռեժիսորներից մեկի՝ Էրիկ Նազարյանի Die Like a Man-ը: Նազարյանը ծնվել է Հայաստանում, մեծացել՝ Կալիֆորնիայում: Նրա՝ բեթգրաունդի եւ մշակույթների միաձուլումը ստեղծագործական սեփական ձեռագիր է ձեւավորել:

Լրագրող Լիանա Աղաջանյանը, որը հրատարակել էր Dining in Diaspora գիրքը, նաեւ համանուն նախագիծ է գործարկել, որով գաստրոնոմիական վարպետաց դասեր է անցկացնելու եւ բաղադրատոմսերի պատմության միջոցով անդրադառնալու է կոնկրետ անձանց եւ ընտանիքների: Նաեւ ցուցադրություններ են կազմակերպվում՝ ստենդների, արվեստի գործերի եւ այլ արտեֆակտների տեսքով: Այս տարի սպասվում է, որ Լոս Անջելեսի Հանրային գրադարանում տեղի կունենա հայ լուսանկարիչ Արա Օշակյանի How the Future May Hold ցուցադրությունը, որը սփյուռքի ինքնության, ցեղասպանության տրավմայի, հարկադիր տեղահանության, վերադարձի իրավունքի եւ անորոշ ապագայի հետ կապված հետազոտություն է:

Ավանդական միջոցառումների շարքում կարելի է հիշատակել ամերիկացի հայտնի քաղաքական գործիչների, կոնգրեսականների, սենատորների մասնակցությունն ու ելույթներն այս միջոցառումների ժամանակ: Առհասարակ, խոսելով Armenian Heritage Month-ի մասին, պետք է նկատի ունենալ, որ Միացյալ Նահանգներում Հայոց ցեղասպանության մասին այդքան բարձրաձայն խոսում են՝ անկախ վարչակազմերից եւ այլն, այն բանի շնորհիվ, որ կա ամերիկահայ լավ կազմակերպված ուժեղ համայնք եւ հզոր լոբբիզմ: Եվ ուղղահայաց, եւ հորիզոնական մակարդակներում ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների եւ խմբերի կողմից տարվում է եռանդուն աշխատանք: Բացի այդ՝ արդեն քաղաքական առումով, կարեւոր թեզ է նաեւ, այսպես ասած, ընտրություններում 1 միլիոնից ավելի «ամերիկահայերի քվեները» ստանալու հարցը, որը շահելու համար նաեւ ամերիկյան քաղաքական շրջանակները չեն կարող շրջանցել այն հիմնական հարցը կամ հարցերը, որոնք հուզում են հայ համայնքին՝ նաեւ պատմական հիշողության հետ կապված:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am